



# EaPITC

Արևելյան Գործընկերության տարածքային  
համագործակցության ծրագրի

ՂԻՏՈՒՄԵՂՉ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Ծրագիրը ֆինանսավորվում է  
Եվրոպական Միության կողմից



Տարածքային համագործակցության ծրագրերը Արևելյան գործընկերության երկրների համար հնարավորություն են ստեղծում բացահայտել և համատեղ հաղթահարել իրենց սահմանակից շրջաններում առկա ընդհանուր մարտահրավերները՝ տեղական մակարդակում ապահովելով կայուն տնտեսական և սոցիալական զարգացում: Արևելյան գործընկերության տարածքային համագործակցությունը (ԱԳՏՀ) ներառում է տարածքային համագործակցության չորս ծրագրեր՝ Հայաստան - Վրաստան, Ադրբեջան - Վրաստան, Բելառուս - Ուկրաինա և Մոլդովա - Ուկրաինա:

Ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական Միության աջակցությամբ: Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու է Altair Asesores ընկերության կողմից գլխավորած կոնսորցիումը և այն որևէ կերպ չպետք է ընկալվի որպես Եվրոպական Միության տեսակետների արտացոլում:

Սույն ուղեցույցում առկա ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ: Հետևաբար օրենսդրության և վարչական ընթացակազմերի հետագա փոփոխությունները չեն կարող հաշվի առնվել:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ .....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	6
ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ .....	7
ՄԱՍ 1. ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ .....	8
1.1 ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.....	8
1.2 ԵՄ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԿՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎԻՃԱԿԸ.....	9
1.3 ԾՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ և ԾԱՆՈՒՑՈՒՄ .....	10
Շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպություններ .....	10
Պետական մարմիններ և պետական հիմնարկներ .....	10
1.4 ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ .....	11
Շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպություններ .....	11
Պետական մարմիններ և պետական հիմնարկներ .....	12
ՄԱՍ 2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄ .....	15
2.1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ԴՐԱ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ և ՓՈԽԱՆՑՈՒՄ .....	15
Դրամական փոխանցումներ.....	15
2.2 ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ.....	19
2.3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ .....	21
2.4 ՀԱՐԿԱԶԱՏՈՒՄ. ԱԱՀ և ՄԱՔՍԱՏՈՒՐՔ, ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ .....	23
ԱԱՀ-ից ազատում .....	24
Ազատում մաքսատուրքից.....	25
Եկամտային հարկից ազատում.....	25
Շահութահարկից ազատում .....	26
Ինչպե՞ս դիմել արտոնություններից օգտվելու համար.....	26
2.5 ՄԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ .....	29
Ծրագրի իրականացման նպատակով աշխատակազմի ընտրություն .....	29
Տեղական և օտարերկրյա փորձագետների վարձակալում.....	30
2.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԻ և ՕՐԱՊԱՀԻԿԻ ՎՃԱՐՈՒՄ .....	32
Ընդհանուր տեղեկատվություն .....	32
Հայ և օտարերկրյա փորձագետների մասնակցությունը Հայաստանում նախատեսված ծրագրային միջոցառումներին .....	33
Հայաստանից դուրս ծրագրային միջոցառումներին հայ և օտարերկրյա փորձագետների մասնակցությունը.....	34
Հանրապետական գործադիր իշխանության մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների արտասահման գործուղման հատուկ պայմաններ .....	35
2.7 ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ .....	36
Պետական մարմինների և/կամ պետական հիմնարկների կողմից գնումների իրականացում .....	37
Ոչ պետական կազմակերպությունների կողմից գնումների իրականացում .....	39

2.8 ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ և ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....42

ՄԱՍ 3. ԾՐԱԳՐԻ ԱՈՒԴԻՏ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....45

3.1 ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ և ՆՇԱՆԱԿԵԼ ԱՈՒԴԻՏՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ) .....45

3.2 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ .....46

ՄԱՍ 4. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....47

Հավելված 1. Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության պատվիրակություն ծանուցման ձևանմուշ .....48

Հավելված 2. Հարկազատման տեղեկանքի ձևանմուշ .....49

Հավելված 3. ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից հարկազատման տեղեկանքներ ձեռքբերելու համար անհրաժեշտ գրության ձևանմուշ .....50

Հավելված 4. Հարկային արտոնություններից օգտվելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն հասցեագրված գրության ձևանմուշ .....51

Հավելված 5. ԱԼԳՏՀ ծրագրերի համար կարևոր իրավական ակտերի ցանկ .....52

Հավելված 6. Հարց ու պատասխան .....57

Հավելված 7. Գործընթացների ամփոփ նկարագիր .....60

Հավելված 8. Հարկային արտոնություններ ստանալու գործընթացի հիմնական քայլեր .....61

Հավելված 9. Սահմանումներ .....63



## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱԳԿՊԿ</b>	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
<b>ԱԼԳ</b>	Արևելյան գործընկերություն
<b>ԱԼԳՏՀ</b>	Արևելյան գործընկերության տարածքային համագործակցություն
<b>ԱՀԿ</b>	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
<b>ԳՀՀ</b>	Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր
<b>ԵՀ</b>	Եվրոպական հանձնաժողով
<b>ԵՀԳԳ/ԵՀԳ</b>	Եվրոպական հարևանության (և գործընկերության) գործիք
<b>ԵՀԲ</b>	Եվրոպական հարևանության քաղաքականություն
<b>ԵՄ</b>	Եվրոպական միություն
<b>ԷՆ</b>	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
<b>ԾԿԳ</b>	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ԵՄ Ծրագրերի բաժին
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՀՄՖ</b>	Հաշվապահների միջազգային ֆեդերացիա
<b>ՊՈԱԿ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
<b>ՏԿԼ</b>	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
<b>ՖՆ</b>	ՀՀ ֆինանսների նախարարություն
<b>GIZ</b>	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH)
<b>PRAG</b>	ԵՄ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի գործնական ուղեցույց

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրոպական Միության (ԵՄ) միջև ներկայիս հարաբերությունները կարգավորվում են Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով (ԳՀՀ), որը ստորագրվել է 1996 թվականի ապրիլի 22-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հուլիսի 1-ին: Այդ ժամանակից ի վեր ԳՀՀ-ն հանդիսանում է ՀՀ և ԵՄ երկկողմ հարաբերությունների իրավական հենքը՝ քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսական, օրենսդրական և մշակութային համագործակցության ոլորտներում:

Որպես 2004 և 2007 թվականների ԵՄ ընդլայնմանը հաջորդած աշխարհաքաղաքական իրավիճակի արձագանք, ԵՄ-ն իր հարևանների հետ սահմանեց հարաբերությունների Նոր շրջանակ՝ Եվրոպական հարևանության քաղաքականություն (ԵՀՔ): ԵՀՔ-ն նպատակ ունի դուրս գալ գործող ԳՀՀ-ի շրջանակներից՝ առաջարկելով Հայաստանին ԵՄ հետ ավելի սերտ հարաբերություններ ձևավորելու հեռանկար՝ քաղաքական և տնտեսական բարեփոխումների գործընթացները խթանելու, ավելի սերտ տնտեսական ինտեգրմանը նպաստելու, ինչպես նաև օրենսդրական և տեխնիկական մոտարկման նպատակով:

ԵՀՔ կարևորագույն բաղադրիչը ԵՄ և ԵՀՔ յուրաքանչյուր գործընկեր երկրի հետ կնքված երկկողմ գործողությունների ծրագրերն են: ԵՄ-ՀՀ ԵՀՔ գործողությունների ծրագիրը ընդունվել է 2006 թվականին: Այն Հայաստանի և ԵՄ միջև համագործակցության ռազմավարական նպատակներ սահմանող քաղաքական փաստաթուղթ է, որը մշակվել է 1999թ. ստորագրված ԳՀՀ-ի դրույթների իրականացմանը նպաստելու համար, ինչպես նաև Հայաստանի հետագա ինտեգրումը Եվրոպական տնտեսական և սոցիալական կառույցներին էլ ավելի խրախուսելու և աջակցելու նպատակով:

ՀՀ և ԵՄ միջև հարաբերությունները հետագայում էլ ավելի ամրապնդվեցին 2009 թվականի մայիսին Եվրոպական հանձնաժողովի կողմից մեկնարկած Արևելյան գործընկերության (ԱԳ) նախաձեռնության շրջանակներում: Թեև ԱԳ-ն շարունակում է գործել ԵՀՔ շրջանակներում, այնուամենայնիվ դուրս է գալիս ԵՀՔ բուն փաթեթի շրջանակներից, քանի որ էլ ավելի է խորացնում երկկողմ համագործակցությունը և ներդնում է տարածաշրջանային համագործակցության Նոր մեխանիզմներ:

ԱԳ տարածաշրջանային համագործակցությունը տարբեր շրջանների միջև տնտեսական զարգացման անհամաչափությունները հաղթահարելու և սահմանների երկայնքով կյանքի որակը բարելավելու կարևորագույն գործիքներից մեկն է: Դրա շրջանակներում Հայաստանը ներգրավված է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրում և վերջերս ներգրավվել է ԱԳ Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրում<sup>1</sup>:

Վերը նշված ծրագրերից բացի Հայաստանը օգտվում է Եվրոպական հարևանության (և գործընկերության) գործիքներից (ԵՀԳԳ/ԵՀԳ), ինչպես օրինակ Թվիսինգը, Թայեքսը, Սիզման և Անդրսահմանային համագործակցությունը<sup>2</sup>:

1 Ծրագրի շահառու շրջաններն են.  
**Հայաստանում** – Շիրակի, Լոռու և Տավուշի մարզեր  
**Վրաստանում** - Սամցխե-Ջավախեթի և Թվեմո-Քարթլի շրջաններ  
2 Հայաստանը մասնակցում է ԵՀԳԳ անդրսահմանային համագործակցության ծրագրերից մեկին՝ Սևծովյան ավազանի երկրների 2007-2013թթ. համատեղ գործողությունների ծրագրին



## ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն ուղեցույցի նպատակն է տրամադրել հակիրճ և ամբողջական տեղեկատվություն ազգային այն ընթացակարգերի և պահանջների մասին, որոնց պետք է հետևեն հայկական շահառուները ԱԳ տարածքային համագործակցության (ԱԳՏՀ) ծրագրի շրջանակներում դրամաշնորհային ծրագրեր իրականացնելիս: Այս ուղեցույցում առկա տեղեկատվությունը հիմնված է պետական, տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից Հայաստանում ծրագրերի իրականացման և ֆինանսական կառավարման գործնական փորձի վրա:

Ուղեցույցը օգտակար կլինի ինչպես հայկական շահառուների, այնպես էլ ԱԳՏՀ ծրագրի գործընկերների համար: Այն օգտակար կլինի նաև հայկական և օտարերկրյա ծրագրերի ղեկավարների, դրամաշնորհային ծրագրերին դիմող կամ իրականացնող կազմակերպությունների համար, որոնք կարիք ունեն հասկանալ, թե ինչ օրենսդրական պահանջներ են գործում Հայաստանում ծրագրերի իրականացման նկատմամբ: Թեև այս ուղեցույցը մշակված է տարածքային համագործակցության ծրագրերի համար, այն պարունակում է տեղեկատվություն, որը կարող է առնչվել նաև Հայաստանում իրականացվող միջազգային տեխնիկական աջակցության այլ ծրագրերին: Այն կարող է ենթարկվել ձևափոխումների և լրամշակման՝ լավագույն փորձը ներառելու, ինչպես նաև համապատասխան ՀՀ օրենսդրությանը և ԵՄ կանոնակարգերին համահունչ լինելու նպատակով:

Ուղեցույցի դրույթները վերաբերում են ծրագրերի շրջանի (ցիկլ) երեք հիմնական փուլերին՝ մեկնարկ, իրականացում և գնահատում ու աուդիտ<sup>3</sup>: Այն ընդգրկում է հետևյալ քայլերը, ինչպես նաև միջազգային ծրագրերի իրականացմանն առնչվող ազգային կանոնակարգերին և հայկական կազմակերպությունների փորձին առնչվող մի շարք այլ թեմաներ.

- Ծրագրի մեկնարկ
- Ծրագրի իրականացում
- Ծրագրի աուդիտ և հաշվետվություն

Ուղեցույցը պարունակում է նաև մի շարք հղումներ իրավական ակտերին, որոնցից կարևորագույնները ներկայացված են հավելվածի տեսքով: Մյուս բոլոր ակտերը կարելի է գտնել համապատասխան մարմնի ինտերնետային կայքից:

Ուղեցույցն օգտագործողների համար կարող է հանդիսանալ տեղեկատու, որտեղ որոշ թեմաների վերաբերյալ կարելի է գտնել գործնական օժանդակություն: Այս ուղեցույցում ներկայացված է միայն Հայաստանի օրենսդրության առնչվող տեղեկատվություն: Եվ քանի որ օրենսդրական պահանջները, կախված ղեկավար գործընկեր կամ գործընկեր կազմակերպության իրավական կարգավիճակից, կարող են տարբերվել, ուղեցույցում դրանք ներկայացված են առանձին ենթազույգների տեսքով: Եթե չկա որևէ տարբերակում, ապա ընդհանուր կանոնները կիրառվում են բոլորի համար:

ԱԳՏՀ-ին առնչվող բոլոր ընթացակարգերին և պահանջներին կարելի է ծանոթանալ համապատասխան ծրագրի իրականացման ձեռնարկից, ինչպես նաև ԵՄ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի գործնական ուղեցույցից (PRAG):

**3** Ծրագրային շրջանի (ցիկլ) իրականացման փուլը ամենակարևորն է, քանի որ այս փուլում են ստացվում նախատեսված օգուտները: Հետևաբար ցիկլի մյուս բոլոր փուլերը հիմնականում աջակցում են իրականացման փուլին: Ծրագրի իրականացումը սկսվում է դրամաշնորհի պայմանագրի ստորագրման պահից: Ծրագրի ղեկավար գործընկերը և մյուս գործընկերները ծրագիրն իրականացնում են համատեղ: Ընթացքը մոնիտորինգի է ենթարկվում պայմանագրային մարմնի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ԵՄ ծրագրերի բաժնի կողմից՝ հանդիպումների, միջանկյալ և ավարտական հաշվետվությունների միջոցով:



# ՄԱՍ 1 ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱԿԿ





## 1.1 ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարը հանդիսանում է ԵՄ տեխնիկական աջակցությամբ իրականացվող ծրագրերի Ազգային համակարգողը: ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը տրամադրում է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի հարկային և մաքսային արտոնությունները, վարում է այդ ծրագրերի գրանցամատյանը, դիտանցում է (մոնիտորինգի է ենթարկում) դրանց առաջընթացը և ապահովում այդ ծրագրերի սահուն իրականացումը՝ դրանց համար սահմանված պայմաններին համապատասխան:

Էկոնոմիկայի նախարարությունը (մասնավորապես Եվրամիության հետ համագործակցության վարչության ԵՄ Ծրագրերի բաժինը (ԾԿԳ)) պետական կառավարման մարմին է, որը ՀՀ տարածքային կառավարման նախարարության (ՀՀ ՏԿՆ) հետ համատեղ համակարգում է ԱԳՏՀ ծրագիրը Հայաստանում: Մասնավորապես ԾԿԳ-ն ՀՀ ԷՆ անունից.

- հայկական կազմակերպություններին տրամադրում է պարզաբանումներ համապատասխան ծրագրերի պատրաստման և իրականացման վերաբերյալ,
- կազմակերպում է ազգային լեզվով տեղեկատվության փոխանցում հավանական դիմորդներին և գործընկերներին (կազմակերպելով փոքրամասշտաբ դասընթացներ, տրամադրելով թարգմանություններ ծրագրի ինտերնետային կայքից, ծանուցելով ծրագրային առաջարկներ ներկայացնելու հայտարարության մասին, բացատրելով ծրագրի ընթացակարգերը և կանոնները),
- մշակման և իրականացման փուլերում համակարգում և դիտանցում է ծրագրերը և այլն:

Այնուամենայնիվ, քանի որ ԱԳՏՀ ծրագրի հիմնական նպատակն է ամրապնդել անդրսահմանային կապերը Հայաստանի և Վրաստանի մարզերի տեղական իշխանությունների, համայնքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև, դրանով իսկ խթանելով տարածքային զարգացումը, ՀՀ ՏԿՆ-ն անմիջականորեն ներգրավված է ծրագրի համակարգման գործում և անհրաժեշտ աջակցություն է տրամադրում և ուղղորդում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ծրագրի հաջող իրականացման և նախատեսված արդյունքներին հասնելու համար: ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալը հանդիսանում է Նաև Հայաստան-Վրաստան համատեղ գործառնական ծրագրի համատեղ որոշումների ընդունման հանձնաժողովի (որոշումների կայացման հիմնական մարմին) համանախագահ:

### Կոնտակտային տվյալներ

**ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ԵՄ ծրագրերի բաժին (PAO)**

Կոնտակտային անձ: **Ամայա Հովսեփյան**

Հասցե՝ **Մ. Մկրտչյան 5, Երևան 0010, ՀՀ**

Հեռ՝ **(+374 10) 597 179**

Ֆաքս՝ **(+374 10) 526 577**

Էլ. փոստ՝ **ahovsepyan@mineconomy.am**

Կայք՝ **www.mineconomy.am**

### Կոնտակտային տվյալներ

**ՀՀ տարածքային կառավարման նախարարություն**

Կոնտակտային անձ: **Աշոտ Գիլոյան**

Հասցե՝ **Կառավարական տուն 2, Հանրապետության Հրապարակ, Երևան 0010, ՀՀ**

Հեռ՝ **(+374 10) 511 342**

Ֆաքս՝ **(+374 10) 511 332**

Էլ. փոստ՝ **a.giloyan@mta.gov.am**

Կայք՝ **www.mta.gov.am**



# 1.2 ԵՄ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

<b>Իրավական շրջանակ</b>	Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային Համաձայնագիր, վավերացված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 4-ին
-------------------------	--

ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերը Հայաստանում չունեն իրավական կարգավիճակ, հետևաբար նրանք չեն կարող գրանցվել որպես իրավաբանական անձ: Այդ ծրագրերով նախատեսված գործողությունների իրականացումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային Համաձայնագրով, ինչը հստակորեն սահմանում է ԵՄ կողմից ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող ծրագրերի իրականացման կանոնները, մասնավորապես որոնք առնչվում են արտարժույթի փոխանակմանը, հարկային և մաքսային կանոնակարգումներին:

## Կոնտակտային տվյալներ

**ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակություն**  
 Այցելուների համար՝ **Պռոշյան փող., Երևան**  
 Փոստային հասցե՝ **Ֆրիկի 21, Երևան, 0002, ՀՀ**  
 Հեռ՝ **(+374 10) 546 494**  
 Ֆաքս՝ **(+374 10) 546 495**  
 Էլ. փոստ՝ **delegation-armenia@eeas.europa.eu**  
 Կայք՝ **eeas.europa.eu/delegations/armenia**

Օրինակ՝ Շրջանակային Համաձայնագիրը սահմանում է, որ Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող որևէ ծրագրի իրականացման համար ներմուծվող ցանկացած ապրանք ենթակա չէ շահառու երկրի կամ նրա որևէ կառույցների կողմից մաքսային և ներմուծման տուրքերի, հարկային կամ այլ նմանատիպ վճարումների գանձման<sup>4</sup>:

<sup>4</sup> Համայնքի կողմից ֆինանսավորվող պայմանագրերը չեն կարող հանդիսանալ Շահառուի երկրում ավելացված արժեքի հարկի, ակցիզային դրոշմանիշների, գրանցման պարտավորությունների կամ համարժեք ազդեցություն ունեցող այլ վճարների կիրառման առարկա՝ անկախ այն բանից՝ այս վճարները գոյություն ունեն կամ պետք է հաստատվեն, թե պայմանագիրը կնքված է այն անձանց հետ, որոնք Շահառուի կամ որևէ այլ երկրից են (Շրջանակային Համաձայնագիր, հոդված 3.3):



### 1.3 ԾՐԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ և ԾԱՆՈՒՑՈՒՄ

<b>Իրավական շրջանակ</b>	«Պետական դրամաշնորհների հաշվառման և հաշվետվությունների կազմման ու հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 32 որոշում, ընդունված 2003 թվականի հունվարի 16-ին:
-------------------------	---

Հայկական շահառուները և գործընկեր կազմակերպությունները, որոնք ԱԳՏՀ ծրագրի շրջանակներում կնքել են դրամաշնորհի պայմանագիր, դիմելով ՀՀ-ում ԵՄ պատվիրակություն (տես հավելված 1)<sup>5</sup>, կարող են ստանալ գրություն այն մասին, որ տվյալ ծրագիրը հանդիսանում է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր:

#### Շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպություններ

Քանի որ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերը չունեն իրավական կարգավիճակ, հետևաբար նրանք չեն կարող գրանցվել որևէ պետական կառավարման մարմնում: Այդպիսով դրանք շարունակում են գործել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների միջև ստորագրված Շրջանակային համաձայնագրի ներքո:

Սակայն ծրագրերը պետք է գրավոր կերպով ծանուցեն ԵՄ պատվիրակությանը՝ հաշվառվելու նպատակով: Սա օրենսդրորեն պարտադիր պահանջ չէ, կամ նախատեսված չէ որևէ իրավական ակտով: Սակայն այդ ծանուցումը հնարավորություն կտա ծրագիրն իրականացնողներին սկսել հարկային արտոնությունների ստացման գործընթացը:

Հայաստանում ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերին առնչվող միակ իրավական կարգավորումն առնչվում է հարկային արտոնություններին, որը կարգավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1112-Ն որոշմամբ: Ծանուցման գործընթացը կարող է նաև հաղորդակցության և փոխճանաչման ոչ պաշտոնական ուղիներ ստեղծել ՀՀ պետական կառավարման մարմինների և ԵՄ պատվիրակության միջև:

#### Պետական մարմիններ և պետական հիմնարկներ

Պետական մարմինների և պետական հիմնարկների կողմից ստացված դրամաշնորհների գրանցման գործընթացը սահմանված է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 32-Ն որոշմամբ:

Պետական մարմինների և/կամ պետական հիմնարկների կողմից ստացված դրամաշնորհների հաշվառումը, ինչպես նաև դրանց հետ կապված այլ գործառնությունների համակարգումն ու դրանց նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը: Այդ նպատակով պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմինները ՀՀ ֆինանսների նախարարությանն են տրամադրում պայմանագրի պատճենը:

Պետական մարմինները և պետական հիմնարկները եռամսյա և տարեկան պարբերականությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունն են ներկայացնում հաշվետվություններ՝ համապատասխան պայմանագրերի շրջանակներում փաստացի ստացված դրամաշնորհների և դրանց հետագա օգտագործման մասին՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2003 թվականի մայիսի 21-ի թիվ 449-Ն հրամանով հաստատված Հ-12-Բ ձևանմուշին համապատասխան: Այս հաշվետվությունները պետք է պատրաստվեն և ներկայացվեն ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի փետրվարի 4-ի թիվ 80-Ն հրամանով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Ինչպես շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպությունները, պետական մարմինները և/կամ պետական հիմնարկները պետք է գրավոր ծանուցեն ՀՀ-ում ԵՄ պատվիրակությանը՝ հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվառվելու համար:

5 Խնդրում ենք ՀՀ-ում ԵՄ պատվիրակությունից ճշտել, թե ինչ փաստաթղթեր են պետք ներկայացնել



## 1.4 ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ

<b>Իրավական շրջանակ</b>	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին
	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 1996 թվականի հունիսի 30-ին

### Շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպություններ

ԱԼԳՏՀ ծրագրի կողմից ֆինանսավորվող ծրագրերի հայկական ղեկավար գործընկեր և/կամ գործընկեր կազմակերպությունները կարիք կունենան բացել արտարժույթային բանկային հաշիվ: Ոչ պետական կազմակերպությունները կարող են Հայաստանի ցանկացած լիցենզավորված բանկում բացել մեկ կամ մի քանի բանկային հաշիվ ՀՀ դրամով կամ արտարժույթով:

Բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ է.

- այցելել բանկ,
- լրացնել հաշվի բացման համար նախատեսված դիմումը և
- կնքել բանկային հաշվի պայմանագիր:

<b>Անհրաժեշտ փաստաթղթերը</b>	<p>Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են տարբերվել բանկից բանկ: Սակայն Հայաստանի բոլոր բանկերը սովորաբար պահանջում են հետևյալ փաստաթղթերը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. հաշվի բացման դիմում՝ Բանկի կողմից սահմանված ձևին համապատասխան,</li> <li>2. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված գրանցման վկայականի պատճենը,</li> <li>3. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բնօրինակ (եթե ներկայացվում է կանոնադրության կրկնօրինակը, այն պետք է լինի կնքված և ստորագրված ընկերության լիազոր անձի կողմից),</li> <li>4. Հաշվի կարգադրիչների (գործադիր մարմնի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, բանկի հետ ֆինանսական գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձի) ստորագրությունների նմուշների և կլոր կնիքի դրոշմի քարտերը՝ վավերացված հարկային մարմնի կողմից (2 /երկու/ օրինակից),</li> <li>5. Ընկերության ղեկավարի և գլխավոր հաշվապահի (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթղթերի (անձնագիր կամ նույնականացման քարտ) պատճենները:</li> </ol>
<b>Հաշվի տեսակը</b>	ՀՀ դրամով կամ արտարժույթով ընթացիկ հաշիվ (ոչ պետական կազմակերպությունների համար):

ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերում բացված բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից<sup>6</sup>:

**6** Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հիմնադրված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է: Հիմնադրամի հիմնադրման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով (<http://www.adgf.am/>):



<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Բանկային հաշվի բացման և սպասարկման վճարները տարբերվում են բանկից բանկ: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել շուկան, ծանոթանալ, թե ինչ պայմաններով բանկային հաշիվներ են առաջարկում բանկերը, կատարել համեմատություններ և ընտրել լավագույն տարբերակը: Մասնավորապես ուշադրություն դարձրեք.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Բանկային հաշվի բացման և սպասարկման վճարներին,</li> <li>• Հարմարավետությանը (բանկի գտնվելու վայր, աշխատանքային ժամեր),</li> <li>• Հաշվի հասանելիության միջոցներին (ընտրեք այնպիսի բանկ, որն առաջարկում է հեռախոսով, ինտերնետային կապի կամ հաղորդակցության այլ միջոցներով կատարվող բանկային ծառայություններ),</li> <li>• Տոկոսադրույքներին,</li> <li>• Սպասարկման որակին:</li> </ul>
	<p>Անհրաժեշտ է բացել Եվրո-ով արտահայտված բանկային հաշիվ, նույնիսկ եթե Դուք ղեկավար գործընկեր չեք, քանի որ դրամաշնորհը կտրամադրվի (Ղեկավար մարմնի կամ վրացական գործընկերոջ կողմից) Եվրո-ով: Հայկական գործընկերներին կամ մատակարարներին փոխանցումները պետք է կատարվեն ՀՀ դրամով: Ուստի, որպեսզի նվազագույնի հասցվի տարադրամի փոխարժեքի տատանումից առաջացող հնարավոր կորուստները, Դուք կարող եք պահել ստացված գումարները Եվրո-ով և իրականացնել Եվրո-ի փոխարկում ՀՀ դրամի, միայն հայկական գործընկերների (մատակարարներ) հետ գործարքներ իրականացնելիս: Հարկ է նշել նաև, որ վրացական գործընկերներին փոխանցումները կարող եք կատարել Եվրո-ով:</p>

Հայաստանում գործող բանկերի և նրանց կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվության համար այցելեք <http://www.banks.am> և <http://www.cba.am> կայքեր:

**Պետական մարմիններ և պետական հիմնարկներ**

<p><b>Իրավական շրջանակ</b></p>	<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված 1997 թվականի հունիսի 24-ին</p> <p>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին</p> <p>«Հայաստանի Հանրապետության պետական ու այլ հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 404 որոշում, ընդունված 1999 թվականի հունիսի 10-ին</p> <p>«Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 48 որոշում, ընդունված 2002 թվականի հունվարի 18-ին</p>
--------------------------------	---




Պետական և համայնքային բյուջեները (այդ թվում ենթաբյուջետային հիմնարկները, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից) ձևավորում են Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն: Որպես մեկ բյուջետային համակարգի անբաժանելի մաս, սրանք հիմնված են մեկ միասնական պետական քաղաքականության վրա:

Բոլոր պետական մարմինների և պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցները մուտքագրվում են տվյալ հիմնարկին սպասարկող տեղական զանձապետական ստորաբաժանման արտաբյուջետային միջոցների բանկային հաշվին: Եթե պետական կառավարման մարմինները կարող են արտաբյուջետային միջոցների հաշիվներ բացել միայն ՀՀ կառավարության որոշմամբ, ապա համայնքները<sup>7</sup> և պետական հիմնարկները կարող են բանկային հաշիվ բացել նաև զանձապետական համակարգից դուրս:

Այս գործընթացը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության պետական ու այլ հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 404 որոշմամբ:

Գծագիր. Համայնքների համար արտաբյուջետային հաշիվ բացելու համար անհրաժեշտ քայլեր



Պետական մարմինները արտաբյուջետային միջոցների ծախսերի նախահաշիվները ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում վերջինիս կողմից սահմանված ձևին համապատասխան և պատրաստված համաձայն ծրագրի բյուջեի: Պետական մարմինների և պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների ծախսերի նախահաշիվը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Պետական մարմինը, մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 12-ը ներառյալ, ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում արտաբյուջետային եկամուտների գոյացման և տնօրինման մասին հաշվետվություն:

Պետական մարմինների կողմից ստացված դրամաշնորհները պետք է ներառվեն որպես պետական կամ համայնքային բյուջեի եկամուտ: Հետևաբար, ծախսերը պետք է կատարվեն բյուջետային համակարգի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7 Միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կատարված նվիրաբերության դեպքում և այդ անձանց պահանջով



<p><b>Իրավական շրջանակ</b></p>	<p>«Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 930-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի թիվ 80-Ն հրաման, ընդունված 2008 թվականի փետրվարի 4-ին</p> <p>«Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշվի օրինակելի ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 918-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 94-Ն հրաման, ընդունված 2011 թվականի փետրվարի 23-ին</p>
<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Եթե Դուք հանդիսանում եք ծրագրի ղեկավար, ապա անհրաժեշտություն կլինի բացել և օգտագործել արտարժույթային (Եվրո) հաշիվ, քանի որ փոխանցվող գումարները կլինեն Եվրո-ով: Եթե Դուք ծրագրի Գործընկերք, ապա դրամաշնորհով նախատեսված գումարների փոխանցման արժույթի կիրառումը կախված է Ձեր և Ղեկավար գործընկերոջ միջև առկա պայմանավորվածությունից: Դուք կարող եք պայմանավորվել նաև որ հայկական գործընկերներից որևէ մեկը (օրինակ հասարակական կազմակերպություն) Ղեկավար գործընկերից գումարները ստանա Եվրո-ով և այնուհետև այն փոխանցի մյուս հայկական գործընկերներին (օրինակ պետական հիմնարկ) դրամով: Այս դեպքում բոլոր ընթացակարգերը և անհրաժեշտ մանրամասնությունները պետք է նախատեսված լինեն պայմանագրում, մինչև դրա ստորագրումը:</p> <p>Համայնքները կարող են դրամաշնորհային միջոցները, արտաբյուջետային հաշիվ բացելու փոխարեն, փոխանցել տեղական գանձապետական ստորաբաժանումներում առկա իրենց հաշիվներին: Այս դեպքում ֆինանսական միջոցները պետք է փոխանցվեն ՀՀ դրամով: Տարադրամի փոխարժեքի տատանումներից խուսափելու նպատակով համայնքները կարող են տեղեկացնել տեղական գանձապետական ստորաբաժանմանը, որ տվյալ ֆինանսական միջոցները դրամաշնորհներ են: Այդ դեպքում տարադրամի փոխանակումը կիրականացվի ՀՀ պետական բյուջեով նախատեսված փոխարժեքին համապատասխան:</p>



# ՄԱՍ 2

# ԾՐԱԳՐԻ

# ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ





## 2.1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ԴՐԱ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԱՏԱՑՈՒՄ և ՓՈԽԱՆՑՈՒՄ

Իրավական շրջանակ	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին
	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին
	«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք, ընդունված 1996 թվականի դեկտեմբերի 4-ին

Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ՀՀ ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտները կարող են առանց որևէ սահմանափակումների և առանց հայտարարագրման ՀՀ տարածք փոխադրել, առաքել, ներմուծել և ՀՀ տարածքից փոխադրել, առաքել, արտահանել արժութային արժեքներ, բացառությամբ ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու, տնտեսական ռիսկերը կանխարգելելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի դեպքերի<sup>8</sup>: ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգն ու պայմանները<sup>9</sup>:

### Դրամական փոխանցումներ

Հայաստանում չկան ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում արտարժույթի փոխանցման վերաբերյալ հատուկ կանոնակարգեր: Սակայն, Հայաստանի տարածքում գործող բանկերից բացի, գործում են նաև դրամական միջոցների փոխանցում իրականացնող այլ կազմակերպություններ: Համաձայն գործող օրենսդրության ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպություններին տրամադրելով դրամական փոխանցումներ կատարելու լիցենզիա, թույլ է տալիս վերջիններիս հաճախորդների համար իրականացնել դրամական փոխանցումներ առանց բանկային հաշվի բացման:

Կախված դրամական փոխանցումների կատարման եղանակից (բանկային հաշվի միջոցով կամ առանց բանկային հաշվի բացման), ֆինանսական գործակալը (բանկ, դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություն) կարող է առաջարկել տարբեր գործիքներ<sup>10</sup>:

Եթե փոխանցում իրականացնող կազմակերպությունն ունի բանկային հաշիվ, ապա փոխանցումները կարելի է կատարել հետևյալ գործիքների միջոցով.

- **Վճարման հանձնարարական**<sup>11</sup> հանձնարարում է բանկին փոխանցել տվյալ գումարը հանձնարարականում նշված անձին/կազմակերպությանը: Այս դեպքում փոխանցման (վճարման) նպատակը պետք է նշված լինի վճարման հանձնարարականում,

8 Թույլատրվում է մինչև 10,000 ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք այլ կախիկ արտարժույթի ներմուծումը Հայաստան, առանց որևէ փաստաթղթի առկայության

9 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 5

10 Սույն ուղեցույցը չի նկարագրում առանց բանկային հաշվի բացման փոխանցումների իրականացման համակարգը, քանի որ ենթադրվում է, որ բոլոր գործընկերները, որպես իրավաբանական անձ, ունեն բանկային հաշիվներ:

11 Վճարման հանձնարարականը բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով բանկին տրված հանձնարարություն է՝ վճարել կամ հանձնարարել այլ բանկի՝ վճարել հաստատագրված կամ հաշվարկվող գումարը (տես՝ «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք):



- **Կանխիկ**՝ հաճախորդն անձամբ է գումարները տալիս բանկին և հանձնարարում դրանք փոխանցել իր կողմից նշված անձին կամ կազմակերպությանը:

### Դրամական միջոցների փոխանցումը բանկային հաշվի միջոցով

Բանկային հաշվի միջոցով դրամական փոխանցումներ իրականացնելու համար անհրաժեշտ է.

- Դիմել համապատասխան (տվյալ անձին սպասարկող) բանկին,
- Ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ (լիազորված անձի անձնագիր կամ նույնականացման քարտ), եթե փոխանցումը կատարվում է բանկ այցելության միջոցով,
- Տրամադրել միջոցներ ստացողի վերաբերյալ տեղեկատվություն (անուն, ազգանուն, հասցե և այլն),
- Բանկին ներկայացնել միջոցներ ստացողի բանկային հաշվի համարը (եթե առկա է), ստացողի բանկի անվանումը և փոխանցվող գումարի չափը,
- Ճշտել դրամական փոխանցումների համար տրամադրվող ծառայությունների վճարը, այսինքն ինչքան պետք է ուղարկողը վճարի դրամական փոխանցումներ կատարելու համար և ինչքան կգանձվի ստացողից,
- Դրամական միջոցներ ստացող գործընկերոջը տեղեկացնել փոխանցված գումարի, ինչպես նաև դրա համար վճարվելիք սպասարկման վճարի (եթե առկա է) մասին:

Բանկը ուղարկողի բանկային հաշվից կարող է կատարել փոխանցում միայն այդ հաշվետիրոջ կողմից լիազորված անձի համաձայնությամբ:

Բանկային հաշվից փոխանցումները ՀՀ տարածքում կատարվում են առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում: Արտերկիր կատարվող վճարումների տևողությունը կախված է փոխանցմանը մասնակից բանկերի (թղթակից բանկ) քանակից: Որպես կանոն դա տևում է 1-5 աշխատանքային օր<sup>12</sup>: Այնուամենայնիվ խորհուրդ է տրվում փոխանցման տևողությունը (քանի օր կտևի դրամական միջոցի փոխանցումը ստացողին) ճշտել բանկից: Արտերկիր (կամ արտերկրից) կատարվող փոխանցումների ժամանակ բանկերը կարող է պահանջեն Ձեր բանկի SWIFT կամ IBAN կոդը<sup>13</sup>: Քանի որ հայկական բանկերը չեն տրամադրում IBAN համարով բանկային հաշիվներ, դուք պետք է տրամադրեք ստացող (հայկական) բանկի SWIFT կոդը:

Քանի որ Հայաստանի տարածքում գործող գրեթե բոլոր բանկերը առաջարկում են էլեկտրոնային փոխանցումների համակարգ, Դուք կարող եք դառնալ այդ համակարգի անդամ և կատարել Ձեր վճարումները առանց բանկ այցելության: E-banking համակարգին անդամակցելու համար անհրաժեշտ է Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին ներկայացնել համապատասխան դիմում<sup>14</sup> (տրամադրելով պահանջվող տեղեկատվությունը): Առավելագույնը երկու օրվա ընթացքում բանկը կազմակերպության լիազորված անձին կտրամադրի անհրաժեշտ ծրագրավորումը և գաղտնաբառը:

<sup>12</sup> Դրամական փոխանցումները և պրոցեսինգային/քլիրինգային կենտրոնների գործունեությունը կարգավորվում է «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքով

<sup>13</sup> SWIFT-ը (Միջազգային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցային հանրություն, Society for Worldwide Interbank Financial Telecommunication) տվյալ բանկի բացառիկ նույնականացման համարն է, որն օգտագործվում է միջազգային դրամական փոխանցումներ իրականացնելիս: IBAN-ը (միջազգային բանկային հաշվեհամար, International Bank Account Number) կիրառվում է ԵՄ անդամ և գրեթե բոլոր եվրոպական երկրների բոլոր բանկերի կողմից: Սակայն այն առայժմ չի կիրառվում Հայաստանում:

<sup>14</sup> Դիմումի ձևը և e-banking համակարգից օգտվելու սակագները տարբերվում են բանկից բանկ

### Փոխանցված դրամական միջոցները ստանալու համար անհրաժեշտ է.

- Այցելել համապատասխան բանկ կամ դրա մասնաճյուղ,
- Ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ<sup>15</sup>,
- Բանկի աշխատակցին հայտնել հաշվեհամարը,
- Ստուգել բանկային հաշվին մուտքագրված և ուղարկողի կողմից ներկայացված գումարների համապատասխանությունը,
- Պահանջել փոխանցված գումարը:

### Փոխանցումներ Հայաստանի տարածքից դուրս գտնվող գործընկերներին կամ նրանցից

Հայաստանում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև տեղի ունեցող գործարքների դեպքում չկա արտարժույթի փոխանցման և ստացման որևէ սահմանափակում: Հայաստանից դուրս գտնվող ոչ ռեզիդենտին դրամական միջոցների վճարման կամ փոխանցման համար ռեզիդենտները պետք է վճարման հանձնարարական ներկայացնեն այն բանկին, որտեղ գտնվում է ծրագրի բանկային հաշիվը: Անհրաժեշտության դեպքում, փոխանցման հաստատման համար, բանկերը կարող են պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Այսօր գրեթե բոլոր բանկերն առաջարկում են էլեկտրոնային փոխանցումների ծառայություններ, ինչը հնարավորություն է տալիս փոխանցումները կատարել առանց բանկ այցելելու:

### Փոխանցումներ Հայաստանի տարածքում գտնվող գործընկերներին կամ նրանցից

Հայաստանի տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև վճարումները և փոխանցումները պետք է կատարվեն ազգային արժույթով՝ ՀՀ դրամով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի<sup>16</sup>:

Հայաստանից տարածքում ծրագրի գործընկերների միջև դրամական միջոցների վճարումների կամ փոխանցումների համար շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպությունները պետք է վճարման հանձնարարական ներկայացնեն այն բանկին, որտեղ գտնվում է ծրագրի բանկային հաշիվը: Անհրաժեշտության դեպքում, փոխանցման հաստատման համար, բանկերը կարող են պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

Եթե ղեկավար գործընկերը պետական մարմին է, ապա վերջինս դրամաշնորհի միջոցների փոխանցումը ծրագրային գործընկերներին պետք է կատարի գանձապետարանի թույլտվությամբ և նախապես հաստատված նախահաշվին համապատասխան: Պետական մարմինները պետք է վճարման հանձնարարականը ներկայացնեն համապատասխան տեղական գանձապետական ստորաբաժանում: Գանձապետական համակարգում ներդրվել է էլեկտրոնային վճարումների «Client-Treasury» համակարգ, ինչը հնարավորություն է տալիս վճարումները կատարել առանց գանձապետական ստորաբաժանում այցելության: Քանի որ համակարգը դեռ չի ներդրվել բոլոր մարզերում, առաջարկվում է գանձապետական ստորաբաժանումից ճշտել տվյալ մարզում համակարգի առկայությունը:

<sup>16</sup> «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, հոդված 7

<sup>15</sup> Բանկը վճարումը կկատարի միայն այն անձի պահանջի դեպքում, ով բանկային հաշվի բացման ժամանակ տրամադրել էր իր ստորագրությունը:

<b>Գործնական խորհուրդներ</b>	<p>Գործընկերության մասին համաձայնագիրը պետք է պարունակի Հայաստանում կամ դրա տարածքից դուրս ծրագրի գործընկերներին գումարների փոխանցման մանրամասն ընթացակարգերը և պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև արտերկրում գտնվող ծրագրի ղեկավարին Հայաստանի գործընկերների կողմից չձախսված գումարների կամ ոչ նպատակային ծախսված գումարների վերադարձման ընթացակարգերը:</p>
	<p>Փոխանցումը կատարելիս.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ է ունենալ անձը հաստատող փաստաթուղթ (օրինակ անձնագիր),</li> <li>• Ծանոթանալ, գումարների վերադարձման ժամանակ ստացողին չնույնականացնելու դեպքում, փոխանցումը չեղարկելու պայմաններին և ընթացակարգերին, ինչպես նաև սխալները վերացնելու պայմաններին և ժամկետներին,</li> <li>• Անհրաժեշտության դեպքում վերցնել կատարված փոխանցման անդորրագիրը:</li> </ul>
	<p>Անհրաժեշտության դեպքում բանկի կամ գանձապետարանի պատասխանատու աշխատակիցներին բացատրեք, որ վճարումները և փոխանցումները կատարվում են տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում:</p>

## 2.2 ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

<b>Իրավական շրջանակ</b>	«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 1996 թվականի հունիսի 30-ին
	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 1996 թվականի հունիսի 30-ին
	«Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի թիվ 3 պաշտոնական պարզաբանում, ընդունված 2005 թվականի հոկտեմբերի 11-ին

ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրեր իրականացնող հայկական կազմակերպությունները ՀՀ տարածքում վճարումները պետք է կատարեն Հայաստանի ազգային արժույթով՝ ՀՀ դրամով: Սովորաբար, դրամով վճարում կատարելու համար կազմակերպությունները պետք է դիմեն այն բանկին, որը սպասարկում է տվյալ ծրագրի բանկային հաշիվը, որոշ չափի եվրո փոխարկեն ՀՀ դրամի և փոխանցեն այդ գումարը դրամային հաշվին: Այս դեպքում պետք է պատրաստվի երկու փաստաթուղթ՝ արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիր (այս փաստաթուղթը պատրաստվում է բանկի աշխատակցի կողմից) և վճարման հանձնարարական (որոշ գումարի դրամ մատակարարի դրամային հաշվին փոխանցելու պահանջ)<sup>17</sup>: Բանկը պահանջված գումարով արտարժույթը փոխարկում է տվյալ պահին բանկում սահմանված փոխարժեքով (ի դեպ տվյալ փոխարժեքը կարող է տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքից):

Արտարժույթի փոխանակման համակարգը տարբեր է պետական մարմինների համար: Թեև պետական մարմինները կարող են բացել արտարժույթային արտաբյուջետային հաշիվները, սակայն գործնականում այդ սովորական երևույթ չէ: Զանի որ պետական մարմինների ստացած դրամաշնորհային միջոցները պետք է մուտքագրվեն նրանց բյուջե, հետևաբար այդ ֆինանսական միջոցները պետք է փոխանցվեն ՀՀ դրամով: ՀՀ պետական բյուջեով նախատեսված փոխարժեքը կկիրառվի այն դեպքում, երբ Կենտրոնական գանձապետարանին տեղեկացվի որ դրանք դրամաշնորհային միջոցներ են: Հակառակ դեպքում կկիրառվի տվյալ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը:

Գործարքները ներկայացնելիս, պետք է հիշել որ ծրագրի հաշվապահության մեջ կարող են օգտագործվել արտարժույթի տարբեր փոխարժեքներ՝ մեկը ազգային հաշվետվական համակարգի համար, մյուսը ԵՄ հաշվետվական համակարգի համար.

- Շահույթ չհետապնդող ոչ պետական մարմինների և պետական կազմակերպություններ համար՝ այն բանկի կողմից սահմանված փոխարժեքի դրույքաչափը, որտեղ գտնվում է ծրագրի բանկային հաշիվը,

**17** Այս փաստաթղթերը տարբերվում են բանկից բանկ՝ նրանց կողմից օգտագործվող տարբեր բանկային համակարգի ծրագրեր օգտագործելու պատճառով:



- Պետական մարմինների համար՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված փոխարժեքի դրույքաչափ,
- Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործարքների համար՝ կիրառվում են Եվրոպական հանձնաժողովի կողմից սահմանված փոխարժեքի դրույքաչափերը<sup>18</sup>: Պայմանագրային մարմիններ կայացված ֆինանսական հաշվետվությունները պետք է համապատասխանեն ծրագրին և ԵՄ պահանջներին: Վերջնական գումարը պետք է արտահայտված լինի Եվրոյով՝ օգտագործելով Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված և հրապարակված փոխարժեքները:

## Հիշեցում

- Տարադրամի փոխանակումից առաջացած կորուստները ոչ թույլատրելի ծախսեր են և, հետևաբար, չեն կարող ֆինանսավորվել դրամաշնորհի միջոցների հաշվին: Դրանք պետք է փոխհատուցվեն (ֆինանսավորվեն) ծրագրի ղեկավարի/գործընկերոջ (մասնավորապես դրամաշնորհի ստացած կազմակերպության) կողմից:
- Հայաստանի ռեզիդենտների (այդ թվում օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցչությունների) միջև գործարքների գները պետք է արտահայտվեն և վճարվեն ՀՀ դրամով:
- Չկա արտարժույթը ՀՀ դրամի փոխարկելու սահմանափակումներ:

<sup>18</sup> Տես՝ [http://ec.europa.eu/budget/contracts\\_grants/info\\_contracts/inforeuro/inforeuro\\_en.cfm](http://ec.europa.eu/budget/contracts_grants/info_contracts/inforeuro/inforeuro_en.cfm)

## 2.3 ՀԱՇՎԱԴԱՀԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

<b>Իրավական շրջանակ</b>	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 26-ին
-------------------------	--

Հայկական կազմակերպությունները վարում են հաշվապահական հաշվառումը և պահպանում են ներքին ֆինանսական հաշվետվությունները համաձայն գործող ՀՀ օրենսդրության, որը համահունչ է ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտներին (IFRS): Հաշվապահությունը և ֆինանսական հաշվետվությունները պետք է վարվեն ՀՀ դրամով: Համաձայն ՀՀ օրենսդրության 2014 թվականի հուլիսի 1-ից, այն ընկերությունները, որոնց նախորդ տարվա համախառն եկամտի չափը գերազանցում է 500 մլն դրամը, հաշվապահական հաշվառումը վարում են նոր հաշվապահական ծրագրերով:

Համաձայն Եվրոպական միության ընթացակարգերի, ծրագրի կառավարիչը (ղեկավար գործընկեր) պատասխանատու է ծրագրի միջոցների օգտագործումը ԵՀ ընթացակարգերին և արտաքին աջակցության կանոնակարգերին համապատասխան իրականացնելու համար: Ղեկավար գործընկերը ապահովում է ծրագրի միջոցների նկատմամբ վերահսկողություն՝ դրանց իրավունակության (թույլատրելիություն) և ծրագրի խնդիրներին համատեղելիության տեսանկյունից:

Ծրագրի իրականացմանն առնչվող հաշիվները և ծախսերը պետք է հեշտ ճանաչելի և ստուգելի լինեն: Սա կարող է արվել ծրագրի համար առանձին հաշիվ պահելու միջոցով, կամ էլ երաշխավորելով, որ ծրագրի շրջանակներում իրականացված ծախսերը կարող են հեշտությամբ բացահայտվել և ապահովել դրանց հետագծելիությունը շահառուի հաշվապահական հաշվառման համակարգերում:

Բոլոր վճարումները պետք է ուղեկցվեն համապատասխան փաստաթղթերով (օրինակ գնման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր, վճարման հավաստագիր, բոլոր թռիչքների տոմսեր և նստեցման կտրոններ, փորձագետների և ծրագրի ղեկավարների կողմից ստորագրված ժամանակացույց և այլն): Ծրագրի գործընկերները պետք է նշված բոլոր փաստաթղթերի բնօրինակները տրամադրեն Ղեկավար գործընկերոջը համապատասխան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արխիվացման նպատակով: Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում կիրառվում է ծրագիրը ղեկավարող մարմնի ընթացակարգերը: Ուստի առավել մանրամասն տեղեկությունների համար խորհուրդ է տրվում դիմել ծրագիրը ղեկավարող մարմնին (GIZ):

Ծրագրին առնչվող բոլոր գրառումները, հաշվապահությունը և հավաստող փաստաթղթերը պետք է պահպանվեն, քանի որ դրանք հետագայում կարող են պահանջվել ստուգումների, աուդիտի, մոնիտորինգի համար (արխիվացման նվազագույն ժամկետը սահմանված է դրամաշնորհային պայմանագրի Ընդհանուր պայմաններում):

### Հիշեցում

Եվրոպական Հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը, Աուդիտորների եվրոպական դատարանը և պայմանագրային մարմնի կողմից լիազորված որևէ աուդիտոր կարող են իրականացնել փաստաթղթային և տեղում ստուգումներ՝ գնահատելու համար ԵՄ դրամաշնորհի օգտագործումը և կատարված ծախսերը: Ստուգումները կարող են կատարվել ցանկացած պահի՝ ծրագրի իրականացման ընթացքում կամ վերջնական վճարումը կատարելուց հետո հիևգ տարվա ընթացքում:



<b>Գործնական խորհուրդներ</b>	<p>Հայկական գործընկերներին խորհուրդ է տրվում վարել երկու տեսակի հաշվապահություն</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սովորական հաշվապահություն իրենց հաշվապահական համակարգի շրջանակներում, համաձայն գործող ազգային օրենսդրության,</li> <li>• Ծրագրի ֆինանսական կառավարում համաձայն ծրագրի կանոնների, ծրագրի հաշվապահություն՝ ըստ ծրագրի բյուջեի:</li> </ul>
	<p>Առաջին տեսակի հաշվապահությունը ենթադրում է, որ ծրագրի շրջանակներում իրականացված ծախսերը պետք է հոգա գործընկերը և արտահայտվի վերջինիս ներքին հաշվապահական համակարգում, ինչպես դա պահանջվում է դրամաշնորհի պայմանագրով, որն ամրագրում է թույլատրելի ծախսերի չափանիշները:</p> <p>Ծրագրի ֆինանսական կառավարման նպատակով պետք է մշակվի ծրագրի առանձին կառավարչական հաշվապահություն՝ որը հիմնված կլինի ծրագրի բյուջեի համապատասխան ծախսատեսակների վրա:</p>
	<p>Բոլոր պայմանագրերը, հաշիվ ապրանքագրերը և հաշիվները պետք է պարունակեն հստակ հղում ծրագրին: Հաշիվ-ապրանքագրերի պատշաճ պատրաստումը և ներքին հաշվապահության կապը ծրագրի ֆինանսական կառավարմանը հնարավորություն կտա առանձնացնել ծրագրին առնչվող ֆինանսական փաստաթղթերը կազմակերպության այլ փաստաթղթերից:</p>





## 2.4 ՀԱՐԿԱՉԱՏՈՒՄ. ԱԱՀ և ՄԱՔՍԱՏՈՒՐԸ, ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրեր իրականացնող հայկական կազմակերպություններն օգտվում են հարկային արտոնություններից՝ համաձայն հետևյալ իրավական ակտերի.

<b>Իրավական շրջանակ</b>	Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային Համաձայնագիր, վավերացված ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 4-ին
	ՀՀ Մաքսային օրենսգիրք, ընդունված 2000 թվականի հուլիսի 6-ին
	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 1997 թվականի սեպտեմբերի 30-ին
	«Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենք, ընդունված 1997 թվականի մայիսի 14-ին
	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին
	«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1112-Ն որոշում, ընդունված 2009 թվականի սեպտեմբերի 23-ին

Շրջանակային համաձայնագրով նախատեսված ծրագրերի շրջանակներում հարկային արտոնություններից օգտվելու համար Հայաստանում գործող իրավաբանական և ֆիզիկական անձից պետք է կնքեն պայմանագրեր այն կազմակերպությունների հետ, որոնք իրականացնում են ապրանքների ներմուծումը, ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և/կամ ծառայությունների մատուցումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1112-Ն որոշման, Շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունները ներառում են՝

- հարկվող շրջանառության ազատում ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ),
- ներմուծվող ապրանքների ազատում մաքսատուրքից,
- ոչ ռեզիդենտ կազմակերպությունների ազատում շահութահարկից (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ),
- ոչ ռեզիդենտների ազատում եկամտահարկից (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ):

Կան հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով նախատեսված արտոնություններ նաև միայն այն հասարակական կազմակերպություններ համար, որոնք իրականացնում են «բարեգործական» ծրագրեր՝ համաձայն 2002 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված «Բարեգործության մասին» ՀՀ օրենքով տված սահմանման: Այս դեպքում արտոնությունները տրվում են միայն տվյալ ծրագրին, այլ ոչ թե կազմակերպության կողմից իրականացվող բոլոր գործողություններին:

Պետական մարմիններն անմիջապես չեն կարող զբաղվել տնտեսական գործունեությամբ, այլ դա կատարում են հատուկ ստեղծված բիզնես ընկերությունների միջոցով: Տնտեսական գործունեությունից այս ընկերությունների ստացած եկամուտը հարկվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:



Ինչ վերաբերում է հիմնադրամներին, նրանք կարող են զբաղվել նաև տնտեսական գործունեությամբ: Այս դեպքում, հիմնադրամները հարկերը վճարում են այնպիսի պայմաններով, ինչ մյուս առևտրային կազմակերպությունները: Կանոնադրական մյուս գործառույթների համար հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների համար գործում են միևնույն հարկային պահանջները:

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>ԱԱՀ-ի, եկամտահարկի և շահութահարկի, մաքսատուրքի և այլ պարտադիր վճարումների գծով արտոնությունները չեն կիրառվում, եթե հայկական կազմակերպությունը ֆինանսավորում է ծրագրի գործողությունները, ապրանքների ձեռքբերումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, և կատարում է ծրագրի աշխատակիցների աշխատավարձերի (այդ թվում ոչ-ռեզիդենտ) վճարումները իր միջոցներից, ինչը նախատեսված է որպես տվյալ կազմակերպության կողմից ծրագրի իրականացման համաֆինանսավորում:</p>
	<p>Շրջանակային համաձայնագրով իրականացվող ծրագրերի շրջանակներում ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող ընկերությունները այդ ապրանքների և ծառայությունների գծով հարկային հաշիվ չեն լրացնում (համաձայն սահմանված ընթացակարգերի, լրացվում են այլ վճարային և հաշվարկային փաստաթղթեր):</p>

### ԱԱՀ-ից ազատում

ԱԱՀ-ից ազատվում են ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում իրականացվող հետևյալ գործողությունները.

- ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից կամ այդ կազմակերպության հետ անմիջականորեն պայմանագիր կնքած անձանց կողմից ապրանքների ներմուծումը, անկախ այն հանգամանքից, թե ով է օտարերկրյա պետությունից ապրանքներ արտահանողը,
- անմիջականորեն ծրագիր իրականացնող կազմակերպության հետ պայմանագիր կնքած անձանց կողմից ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ),
- անմիջականորեն ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը,
- համապատասխան ծրագրի շրջանակներում ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների կամ նրանց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման իրերի ՀՀ ներմուծումը,
- մեկ ընտանիքի համար մեկ շարժիչային փոխադրամիջոցի ներմուծումը (ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրում աշխատող օտարերկրացիների համար): Նշված փոխադրամիջոցը ՀՀ ներմուծվում է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով, և ժամանակավոր ներմուծման ժամկետը սահմանվում է ներմուծող անձի՝ ՀՀ-ում աշխատելու ժամկետին համապատասխան, բայց ոչ ավելի, քան համապատասխան պայմանագրի գործողության ժամկետը:

ԵՄ կողմից ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող ընկերություններն այդ ապրանքների և ծառայությունների գծով հարկային հաշիվ չեն լրացնում<sup>19</sup>: Նշված անձինք, ԱԱՀ-ից ազատված ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գծով, իրենց մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված

**19** Համաձայն սահմանված ընթացակարգերի, լրացվում են այլ վճարային և հաշվարկային փաստաթղթեր:



ԱՎՀ-ի գումարը միացնում են արտադրության ու շրջանառության ծախսերին<sup>20</sup>: Հարկից ազատված ու ԱՎՀ-ով հարկվող գործարքների (գործառնությունների) գծով հաշվառումն իրականացնում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Նշված անձանց կողմից հարկային հաշիվ լրացվելու դեպքում հարկային հաշվում առանձնացված հարկի գումարը սահմանված կարգով վճարվում է ՀՀ պետական բյուջե:

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Այն դեպքում, երբ հանդիպում եք դժվարությունների ԱՎՀ-ից ազատվելուն համաձայնվող մատակարարներ գտնելու գործում, խորհուրդ է տրվում գործարքի գնալ պարզեցված հարկային ընթացակարգերից օգտվող ընկերությունների հետ (փոքր մատակարարներն ազատված են ԱՎՀ-ից):</p>
-------------------------------------	---

### Ազատում մաքսատուրքից

Համաձայն ՀՀ օրենսդրության, Հայաստանի մաքսային սահմանը հատող բոլոր ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են հայտարարագրման այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտին ընդգրկում է տվյալ ներմուծող կազմակերպության գտնվելու վայրը:

Մաքսատուրքի դրույքաչափերը սահմանված է ՀՀ մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածով: ՀՀ ներմուծվող ապրանքների համար գործում է մաքսատուրքի երկու դրույքաչափ՝ 0% և 10%:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է (այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման, պետք է վճարվեր ապրանքը Հայաստան արտահանելու նպատակով ձեռք բերելու և տեղափոխելու համար): Այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշել մաքսային արժեքը ըստ գործարքի գնի մեթոդի կամ մաքսային մարմինները չեն ընդունում այս մեթոդով հաշվարկված մաքսային արժեքը՝ կիրառվում են մաքսային արժեքի որոշման մյուս մեթոդները: Մաքսային արժեքը ներառում է փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:

ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում մաքսատուրքից ազատվում են.

- ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից կամ այդ կազմակերպության հետ պայմանագիր կնքած անձանց կողմից ապրանքների ներմուծումը, անկախ այն հանգամանքից, թե ով է օտարերկրյա պետությունից ապրանքներ արտահանողը,
- տվյալ ծրագրի շրջանակներում ՀՀ-ում աշխատող օտարերկրյա քաղաքացիների կամ նրանց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման իրերի ՀՀ ներմուծումը,
- մեկ ընտանիքի համար մեկ շարժիչային փոխադրամիջոցի ներմուծումը (ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրում աշխատող օտարերկրացիների համար): Նշված փոխադրամիջոցը ՀՀ ներմուծվում է «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով և ժամանակավոր ներմուծման ժամկետը սահմանվում է ներմուծող անձի՝ ՀՀ աշխատելու ժամկետին համապատասխան, բայց ոչ ավելի, քան համապատասխան պայմանագրի գործողության ժամկետը:

### Եկամտային հարկից ազատում

ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում.

- ՀՀ ոչ ռեզիդենտներն ազատվում են եկամտահարկից,
- ՀՀ ռեզիդենտների ստացած եկամուտների մասով եկամտահարկի պարտավորությունները որոշվում են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

<sup>20</sup> Ապրանքների ձեռքբերման արժեքին:



ՀՀ ռեզիդենտներին եկամուտ վճարող անձը պարտավոր է այդ վճարված եկամուտների գումարների և եկամուտներ ստացող անձանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների մասին տեղեկություններ ներկայացնել տարածքային հարկային մարմին՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

### Շահութահարկից ազատում

Համաձայն ՀՀ օրենսդրության ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում տրամադրվող միջոցների հաշվին ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություններն ազատվում են շահութահարկից (այդ թվում եկամտի վճարման աղբյուրի մոտ):

ՀՀ ռեզիդենտների ստացած եկամուտները ներառվում են նրանց համախառն եկամտի կազմում, և դրանց մասով շահութահարկի պարտավորությունները որոշվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

### Ինչպե՞ս դիմել արտոնություններից օգտվելու համար

Նշված արտոնությունների կիրառման համար հիմք է ընդունվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից տրված տեղեկանքը<sup>21</sup>: Տեղեկանքը կազմվում է չորս բևեռից, որոնք լրացվում են ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից և ներկայացվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն՝ հաստատման: Տեղեկանքը խիստ հաշվառման փաստաթուղթ է և դրա նկատմամբ կիրառվում են խիստ հաշվառման փաստաթղթերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Տեղեկանքի ձևաթղթերը ձեռք բերելու<sup>22</sup> համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կազմակերպատնտեսական վարչություն<sup>23</sup> (Հեռ.՝ (+374 10) 597 200):

<b>Հաստատող մարմին</b>	Էկոնոմիկայի նախարարություն
<b>Կիսազրված ստորաբաժանում, Կոնտակտային տվյալներ</b>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Լիցենզավորման և թույլտվությունների գործակալություն</p> <p>Մ. Մկրտչյան 5, ք. Երևան, 0010</p> <p>Հեռ.՝ (+374 10) 597 225</p>
<b>Արտոնությունների համար պահանջվող փաստաթղթերի ցանկ</b>	<p>Ներկայացված տեղեկանքների հաստատման համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հիմք են ընդունվում հետևյալ փաստաթղթերը.</p> <p>1) հայտը (դիմում), որում նշվում են ծրագրի անվանումը, ապրանքների ներմուծման կամ մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի համարը, ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման արժեքը (թվերով և տառերով), կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, էջերի թիվը<sup>24</sup>,</p> <p>2) ՀՀ-ում ԵՄ պատվիրակության նամակ-հավաստագիրն այն մասին, որ ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը կատարվել է ԵՄ կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում,</p>

21 Տեղեկանքի ձևը տես Հավելված 2-ում:  
 22 Տեղեկանքի ձևաթղթերը տրվում են անվճար:  
 23 Դիմումի ձևի համար տես Հավելված 3:  
 24 Հայտի ձևը տես Հավելված 4-ում:



<p><b>Արտոնությունների համար պահանջվող փաստաթղթերի ցանկ</b></p>	<p>3) ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> <li>կազմակերպության և մատակարարի (կապալառուի) միջև կնքված պայմանագիրը,</li> <li>ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման փաստը հավաստող հանձնման-ընդունման ակտը (ներկայացվում է, եթե այդպիսի փաստաթղթի կազմումը պահանջվում է պայմանագրով),</li> <li>ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց հաշվարկային փաստաթղթերը,</li> </ul> <p>4) այն դեպքում, երբ ապրանքների ներմուծումը կատարվում է ծրագիրն իրականացնող կազմակերպության հետ անմիջականորեն պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձի կողմից.</p> <ul style="list-style-type: none"> <li>կազմակերպության և այդ անձի միջև կնքած պայմանագիրը,</li> <li>մաքսային հայտարարագիրը, որում նշվում են կազմակերպության անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արժեքը,</li> <li>բեռնագիրը, որում, որպես ապրանքներ ստացող, նշված է տվյալ կազմակերպության հետ անմիջականորեն պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձը,</li> </ul> <p>5) այն դեպքում, երբ ապրանքների ներմուծումը կատարվում է ծրագիրն իրականացնող կազմակերպության կողմից.</p> <ul style="list-style-type: none"> <li>վերջինիս հետ կնքած ապրանքների մատակարարման պայմանագիրը,</li> <li>մաքսային հայտարարագիրը, որում նշվում են ծրագիրն իրականացնող կազմակերպության անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արժեքը,</li> <li>բեռնագիրը, որում որպես ապրանքներն ստացող նշված է ծրագիրն իրականացնող կազմակերպությունը (անկախ այն հանգամանքից, թե բեռնագրում նշված առաքողը մատակարարման պայմանագրի անմիջական կողմ հանդիսացող, թե այլ կազմակերպություն է),</li> <li>ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց հաշվարկային փաստաթղթերը:</li> </ul>
---	---

Արտոնությունների կիրառման համար նշված փաստաթղթերի ցանկը սպառիչ է և այլ հիմնավորող փաստաթղթեր չեն կարող պահանջվել (հարկազատման ընթացակարգի հիմնական քայլերը ներկայացված են հավելված 8-ում):

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Տեղեկանքները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը հաստատում (կնքում և ստորագրում) և տրամադրում է դրանք ծրագիր իրականացնող կազմակերպությանը: Բնօրինակներից մեկը՝ հիմնավորող փաստաթղթերի հետ միասին, մնում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում:</p>
-------------------------------------	---



<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Մնացած երեք օրինակները տրվում են ծրագիր իրականացնող կազմակերպությանը, որոնցից.</p> <ul style="list-style-type: none"> <li>• մեկը՝ ի պահ,</li> <li>• երկրորդ օրինակը տրվում է ծրագիր իրականացնող կազմակերպությանը՝ գործարքի մյուս կողմին տրամադրելու համար և</li> <li>• երրորդ օրինակը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար:</li> </ul>
	<p>Հաստատված տեղեկանքը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից ստանալուց հետո, ծրագիր իրականացնող կազմակերպությունը, վերը նշված փաստաթղթերի հետ մեկտեղ, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն: Ապրանքների ներմուծման դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ստացված փաստաթղթերը երկու օրվա ընթացքում վերադարձնում է արտոնություններից օգտվող անձին՝ համապատասխան մաքսատուն կամ մաքսային կետ ներկայացնելու համար, և հրահանգում է այդ մաքսատանը կամ մաքսային կետին՝ հարկային և մաքսային արտոնությունները կիրառելու մասին: Հակառակ դեպքում, նույն ժամկետում, արտոնություններ հայցողին գրավոր տեղեկացնում է նշված արտոնությունների կիրառումը մերժելու մասին՝ գրավոր կերպով մատնանշելով դրա հիմնավորումը:</p>

**Մերժման հիմքերը**

Տեղեկանքի հաստատումը և տրամադրումը կարող է մերժել եթե.

- փաստաթղթերում նշված տեղեկությունները չեն համապատասխանում նախարարության տրամադրության տակ գտնվող և (կամ) ներկայացված տեղեկություններին,
- տեղեկանքում նշված ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների որակական և (կամ) քանակական հատկանիշները չեն համապատասխանում Շրջանակային համաձայնագրին, ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ կնքված պայմանագրի պահանջներին, ինչպես նաև նախատեսված չեն ծրագրի բյուջեով:

Տեղեկանքների հաստատումը մերժելու դեպքում ծրագիրն իրականացնող կազմակերպությունը կարող է խորհրդակցել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ և մերժման պատճառները շտկելուց հետո կրկին ներկայացնել տեղեկանքներ:

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը տեղեկանքի հաստատումը և տրամադրումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է ծրագիր իրականացնող կազմակերպությանը՝ նշելով մերժման պատճառները: Ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից լրացված տեղեկանքները մերժվելու դեպքում համարվում են անվավեր: Այս դեպքում ներկայացված չորս բնօրինակներից երեք օրինակը վերադարձվում է տվյալ կազմակերպությանը, իսկ մեկ օրինակը մնում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում՝ ի պահ:</p>
	<p>Տեղեկանքների ձևաթղթերի կենտրոնացված տպագրությունը, ծրագիր իրականացնող կազմակերպություններին տրամադրումը և տեղեկանքների ձևաթղթերի ու տեղեկանքների հաշվառումը իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից: Տեղեկանքների ձևաթղթերը տպագրվում են համարներով և տառային սերիաներով, որոնք կազմվում են գրքի ձևով՝ յուրաքանչյուրում քսան տեղեկանք՝ 4 օրինակից: Բոլոր չորս օրինակները համարվում են բնօրինակ, տպագրվում են գունավոր ֆոնով և նշվում նույն համարներով ու տառային սերիաներով:</p>



## 2.5 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

<b>Իրավական շրջանակ</b>	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 777-781 հոդվածներ, ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին
	ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 9-ին
	«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 25-ին

Ծրագրային աշխատանքներում ներգրավված աշխատակազմի և փորձագետների համար կատարվելիք ծախսերը հաշվարկելու համար՝ ծրագրին մասնակից կազմակերպության ֆինանսական հարցերով պատասխանատու անձը պետք է պատրաստի այն մարդկային ռեսուրսների ցանկը, որոնք նախատեսվում են ներգրավել ծրագրի իրագործման համար:

Նկատի ունեցեք, որ դրամաշնորհի պայմանագիրը տարանջատում է.

- Ծրագրին մասնակից կազմակերպության կողմից աշխատանքային պայմանագրով ընդունված աշխատակիցների վարձատրությունը: Այս ծախսերը ծրագրի բյուջեում պետք է ներկայացվեն «Մարդկային ռեսուրսներ» ծախսային հոդվածով,
- Ծրագրում ներգրավված փորձագետների վարձատրությունը (վերջիններս չեն աշխատում աշխատանքային պայմանագրով և համարվում են ծառայություններ մատուցող անձիք): Այս ծախսերը բյուջեում արտացոլվում են «Այլ ծախսեր և ծառայություններ» հոդվածի ներքո և իրականացվում են գնումների գործընթացով (ինչպես ծառայությունների մատուցման մյուս բոլոր պայմանագրերը):

### Ծրագրի իրականացման նպատակով աշխատակազմի ընտրություն

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են կամ աշխատանքային պայմանագրով (կամ կոլեկտիվ պայմանագիր), կամ անհատական իրավական ակտով (օրինակ, գործատուի համապատասխան հրաման):

Աշխատանքային պայմանագիրը, կախված հանգամանքներից, կնքվում է անորոշ կամ որոշակի ժամկետով (օրինակ ծրագրի գործողության ժամկետ): ՀՀ օրենսդրությունը հստակորեն սահմանում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքերը:

Համաձայն ՀՀ օրենսդրության, օտարերկրացին կարող է աշխատանքի ընդունվել Հայաստանում, եթե չկա ՀՀ քաղաքացի համարվող այնպիսի մասնագետ, որը կարող է կատարել այդ պարտականությունները և ունի պահանջվող կրթություն և/կամ փորձ: Օտարերկրացիները կարող են աշխատել հայաստանյան կազմակերպությունում, միայն լիազորված մարմնի կողմից տրված աշխատանքի թույլտվության հիման վրա<sup>25</sup>:

Հայաստանի օրենսդրությունը չի սահմանում աշխատակիցների ընտրության հստակ չափանիշներ: Այնուամենայնիվ լավագույն աշխատակիցներ ընտրելու համար հիմնական ցուցումները ներառում են.

- աշխատակիցներին ներկայացվող հստակ չափանիշների կազմում ելնելով պահանջվող անհրաժեշտ ունակություններից և գիտելիքներից,
- դիմորդների հետ հարցազրույցների անցկացում,
- դիմորդների գնահատում՝ օգտագործելով սահմանված չափանիշները:

**25** Թեև հայկական օրենսդրությունը օտարերկրացիների համար պահանջում է աշխատանքի թույլտվություն, սակայն օտարերկրացիներին աշխատանքի թույլտվության տրամադրման և մերժման կարգն ու ժամկետները, աշխատանքի թույլտվություն տրամադրող լիազոր մարմինը սահմանող ՀՀ կառավարության որոշումը դեռևս ընդունված չէ: Հետևաբար այսօր օտարերկրացիները Հայաստանում կարող են աշխատել առանց աշխատանքային թույլտվության:



## Տեղական և օտարերկրյա փորձագետների վարձակալում

Ծրագրով նախատեսված աշխատանքները կարող են հանձնարարվել կազմակերպության աշխատակիցներին կամ փորձագետներին (ազգային կամ օտարերկրյա):

Տեղական կամ օտարերկրյա փորձագետներ վարձելու համար լավագույն տարբերակը «ծառայությունների մատուցման պայմանագրի» կնքումն է: Փորձագետը (ծառայություն մատուցողը) ներգրավվում է որպես անկախ ենթակապալառու և շահառու/գործընկերոջը տրամադրում է մասնագիտական ծառայություններ որևէ բնագավառում: Այս պայմանագրային հարաբերությունները կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 777-781 հոդվածներով և իրենից չի ներկայացնում գործատու-աշխատակից հարաբերություններ: Ի տարբերություն աշխատանքային պայմանագրի, այս դեպքում գործընկերը պայմանագրի մյուս կողմին վճարում է միայն այն բանից հետո, երբ ավարտվել է ծառայությունների մատուցումը, ներկայացվել է աշխատանքների կատարման հաշվետվությունը և ստորագրվել է հանձնման-ընդունման ակտը: Այնուամենայնիվ կողմերը կարող են պայմանավորվել վճարման ժամանակացույցի շուրջ:

Այս ձևը նախընտրելի է օտարերկրացիների հետ համագործակցության համար, քանի որ չի պահանջում այլ ներքին կանոնակարգերի կիրառում: Քանի որ այս պայմանագիրը չի հանդիսանում աշխատանքային պայմանագիր, փորձագետ վարձելու համար չի պահանջվում որևէ լիցենզիա կամ թույլտվություն:

Պայմանագիրը պետք է լինի գրավոր և համարվում է կնքված պայմանագրային կողմերի կողմից ստորագրվելուց հետո:

Պետք է նկատի ունենալ նաև, որ պետական մարմինների կամ պետական հիմնարկների կողմից ծրագրի իրականացման նպատակով օտարերկրյա փորձագետի վարձակալության համար պետք է պահպանվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Համաձայն ՀՀ օրենսդրության ՀՀ քաղաքացիները և օտարերկրյա փորձագետները վճարում են եկամտային հարկ, եթե.

- հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ (այսինքն հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որոնց կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է (այսինքն Հայաստանում է գտնվում նրա տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրանց (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը)),
- հանդիսանում են ոչ ռեզիդենտ, բայց հարկվող եկամուտը<sup>26</sup> ստանում են հայաստանյան աղբյուրներից

**26** Հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է:



Հարկատուի կողմից եկամտային հարկը վճարվում է<sup>27</sup>.

- եկամուտ վճարող կազմակերպության կողմից, որը յուրաքանչյուր անգամ եկամուտներ վճարելիս պատասխանատվություն է կրում եկամտային հարկը հաշվարկելու, գանձելու և ՀՀ պետական բյուջե փոխանցելու համար: Այս դեպքում եկամտային հարկը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամտի չափը (ՀՀ դրամ)	Հարկի գումար
Մինչև 120.000 դրամ	24.4 %
120.000.0 – 2.000.000 դրամ	29.280 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26%
2.000.000 դրամից ավելի	518.080 դրամին գումարած 2.000.000 դրամը գերազանցող գումարի 36%

կամ

- ինքնուրույն, երբ ստացված եկամուտը չի հարկվում կազմակերպության միջոցով

Տարեկան հարկվող եկամտի չափը (ՀՀ դրամ)	Հարկի գումար
Մինչև 1.440.000 դրամ	24.4 %
1.440.000 դրամից ավելի	351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26%

<b>Գործնական խորհուրդներ</b>	Ծառայությունների մասին պայմանագրում հստակ նշեք, թե ով է պատասխանատու եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար:
------------------------------	--

<sup>27</sup> Այս կարգը գործում է ռեզիդենտների և հայաստանյան աղբյուրներից հարկվող եկամուտ ստացող ոչ ռեզիդենտների նկատմամբ:

## 2.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԻ ԵՎ ՕՐԱՊԱՀԻԿԻ ՎՃԱՐՈՒՄ

<p><b>Իրավական շրջանակ</b></p>	<p>«Ճառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գինժառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 2335-Ն որոշում, ընդունված 2005 թվականի դեկտեմբերի 29-ին</p> <p>«Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին» ՀՀ վարչապետի թիվ 1087-Ն որոշում, ընդունված 2013 թվականի նոյեմբերի 26-ին</p>
--------------------------------	---

### Ընդհանուր տեղեկատվություն

Ընդհանուր առմամբ ծրագրի իրականացման համար ներգրավված աշխատակիցների գործուղման և կեցության ծախսերը կարգավորվում են դրամաշնորհային ծրագրով սահմանված բյուջեով: Ծրագրի ղեկավարի և նրա գործընկերների պատասխանատվությունն է որոշել աշխատակիցների և փորձագետների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարների չափը<sup>28</sup>:

Գոյություն ունի երկու իրավիճակ, որոնց դեպքում հնարավոր է կատարել գործուղման և օրապահիկի վճարումները.

- հայկական և օտարերկրյա աշխատակիցների/փորձագետների մասնակցություն Հայաստանում ծրագրի գործողությունների իրականացմանը,
- հայկական աշխատակիցների/փորձագետների մասնակցություն ծրագրի գործողությունների իրականացմանը Հայաստանից դուրս:

Գործուղման և օրապահիկի ծախսերի հատուցման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարության թիվ 2335-Ն որոշմամբ: Որոշումը սահմանում է նաև ՀՀ տարածքում և այլ երկրներում օրապահիկի և գիշերակացի ծախսերի չափը:

<sup>28</sup> Գործուղման ընթացքում յուրաքանչյուր գիշերվա համար հաշվարկվելիք կեցության ծախսերը չպետք է գերազանցեն Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված դրույքաչափերը, որոնք հրապարակված են հետևյալ կայքում [http://ec.europa.eu/europeaid/work/procedures/implementation/per\\_diems/index\\_en.htm](http://ec.europa.eu/europeaid/work/procedures/implementation/per_diems/index_en.htm)



## Հիշեցում

ՀՀ կառավարության նշված որոշման N 2 հավելվածով նախատեսված դրույքաչափերը համարվում են նվազագույն հասարակական կազմակերպությունների կամ այն կազմակերպությունների համար, որոնք չեն ստանում ֆինանսավորում պետական և համայնքային բյուջեներից: Այս կազմակերպությունները, այդ դեպքում, ազատ են կիրառելու ծրագրի բյուջեով հաստատված դրույքաչափերը:

Գործուղման ծախսերը հրավիրող կողմի հաշվին հատուցվելու դեպքում, ենթակա չեն փոխհատուցման գործատուի կողմից: Եթե այդ ֆինանսավորումը կատարվում է մասնակիորեն, հատուցման ենթակա գումարի տարբերությունը պետք է վճարվի գործատուի կողմից (պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների դեպքում, կիրառվում են ՀՀ կառավարության 2335 որոշման 2-րդ հավելվածով սահմանված դրույքաչափերը:

Հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու կամ, անկախ հեռավորությունից, հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքերում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը:

## Հայ և օտարերկրյա փորձագետների մասնակցությունը Հայաստանում նախատեսված ծրագրային միջոցառումներին

Գործուղման մեկնած աշխատակցին օրապահիկը, ճանապարհածախսը և կեցության ծախսերը պետք է վճարվեն ամբողջությամբ, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն դրույքաչափերով: Այս վճարները պետք է կատարվեն գործուղում մեկնելուց առաջ:

Պետական և համայնքի բյուջեների միջոցներից հատկացվող օրապահիկի ծախսերի չափը կազմում է 3000 դրամ՝ բազմապատկած գործուղման օրերի քանակը՝ ներառյալ հանգստյան և ոչ աշխատանքային օրերը, գործուղման մեկնելու և վերադառնալու օրերը:

Գործուղումից վերադառնալուց հետո ճանապարհածախսը և գիշերավարձի ծախսերը հատուցվում են փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի<sup>29</sup> հիման վրա՝ դրանք ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Պետական և համայնքի բյուջեներից ֆինանսավորման դեպքում այն չի կարող գերազանցել որոշման N 2 հավելվածով նախատեսված չափերը:

Հայաստանի տարածքում գործուղվող աշխատողի համար ճանապարհածախսի նվազագույն չափ է համարվում գործող միջմարզային ավտոբուսային երթուղիների սակագները: Պետական և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորման դեպքում առավելագույն չափ է համարվում միկրոավտոբուսային համապատասխան երթուղու սակագինը:

## Հիշեցում

Գործուղման և կեցության ծախսերը պետք է հավաստվեն համապատասխան փաստաթղթերով (տոմս, հաշիվ ապրանքագիր և այլն), որը վկայում է այդ ծախսերի փաստացի գումարը: Օրապահիկի դեպքում չի պահանջվում հավաստող ֆինանսական փաստաթղթեր, բացառությամբ միայն ապացույց այն բանի մասին, որ տվյալ անձը գտնվել է գործուղման վայրում:

<sup>29</sup> Տրանսպորտային ծախսերը հիմնավորող փաստաթղթեր են համարվում տրանսպորտային միջոցի (ինքնաթիռ, գնացք կամ այլ տրանսպորտային միջոց) տոմսը, դրա բացակայության դեպքում՝ ծառայություն մատուցած ընկերության կողմից տրամադրված՝ մեկնելու վերաբերյալ համապատասխան հաստատող փաստաթուղթը, կամ մեկնելու համար ապահովագրական վճարումները հիմնավորող փաստաթղթերը: Գիշերավարձը հատուցվելու դեպքում հաստատող փաստաթուղթ է համարվում տվյալ անձի հյուրանոցում գտնվելու գործուղման ժամանակահատվածը հաստատող հյուրանոցի կողմից տրված փաստաթուղթը և գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) կամ գիշերավարձի վճարումը հիմնավորող փաստաթուղթը (բանկային հաշվից քաղվածք, կանխիկ վճարման անդորրագիր և այլն) և հյուրանոցային նախնական ամրագրման փաստաթուղթը:



<b>Գործնական խորհուրդներ</b>	Գործուղման ծախսերի հատուցումը վճարվում է կազմակերպության աշխատակցին: Ծրագրի շրջանակներում պայմանագրի հիման վրա աշխատող փորձագետների օրապահիկը և գործուղման այլ ծախսերը պետք է նախատեսված լինեն նրանց ծառայությունների մատուցման պայմանագրում և ընդգրկված լինեն պայմանագրի ընդհանուր գումարում:
------------------------------	--

**Հայաստանից դուրս ծրագրային միջոցառումներին հայ աշխատակիցների և փորձագետների մասնակցությունը**

Ոչ պետական կազմակերպությունները գործուղման ծախսերը և օրապահիկը կարող են վճարել ծրագրի բյուջեով նախատեսված դրույքաչափերով: Սակայն այս դրույքաչափերը չպետք է գերազանցեն ծրագիրը ղեկավարող մարմնի՝ GIZ-ի կողմից կոնկրետ երկրի (օրինակ Վրաստան) համար սահմանված դրույքաչափերը: Յուրաքանչյուր երկրի համար ծրագիրը ղեկավարող մարմնի կողմից սահմանված դրույքաչափերը կարելի է գտնել հետևյալ հղումով <http://eaptc-ma.eu/en>:

Պետական կամ համայնքային բյուջեներից ֆինանսավորման դեպքում կիրառվում են կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված դրույքաչափերը: Ավելին, օրապահիկը և գիշերավարձի ծախսերը չպետք է գերազանցեն որոշմամբ սահմանված առավելագույն չափերը: Գիշերավարձի ծախսերի հատուցումը կատարվում է փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, որը պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորման դեպքում չի կարող գերազանցել որոշմամբ սահմանված առավելագույն չափերը: Հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում հատուցման ենթակա է որոշմամբ նախատեսված առավելագույն չափի 70 տոկոսը: Կառավարության որոշումը սահմանում է նաև այն փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն փոխհատուցման գումարը հաշվարկելու համար:

<b>Գործնական խորհուրդներ</b>	Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողը պարտավոր է ներկայացնել գործուղման հաշվետվությունը, գործուղման վկայականը և գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը:
------------------------------	--



## Հանրապետական գործադիր իշխանության մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների արտասահման գործուղման հատուկ պայմաններ

Հանրապետական գործադիր մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի ղեկավարները, նրանց տեղակալները կամ պաշտոնատար այլ անձիք արտասահման գործուղման համար պետք է ստանան ՀՀ վարչապետի թույլտվությունը: Այդ նպատակով նրանք գործուղման մեկնելուց առնվազն մեկ ամիս առաջ պաշտոնապես դիմում են ՀՀ կառավարության աշխատակազմ՝ ներկայացնելով աջակցող փաստաթղթերը, ինչպես օրինակ հրավերը (և դրա թարգմանությունը), միջոցառման օրակարգը, մասնակցության անհրաժեշտության մանրամասն հիմնավորումը:

ՀՀ վարչապետից գործուղման մեկնելու թույլտվություն ստանալուց հետո՝ գործուղման մեկնելուց առնվազն 10 օր առաջ ՀՀ կառավարության աշխատակազմ պետք է ներկայացվի ՀՀ վարչապետի որոշման նախագիծ (ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության<sup>30</sup> և ՀՀ արդարադատության նախարարության կարծիքների հետ միասին):

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Պետական և տարածքային կառավարման մարմինների պաշտոնյաների գործուղումը չի կարող գերազանցել երեք օրը (հեռավոր երկրների և առանձին բացառիկ դեպքերում կարող է նախատեսվել առավելագույնը 5 օր):</p> <p>Գործուղումից վերադառնալուց հետո նրանք եռօրյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ պետք է ներկայացնեն գործուղման արդյունքների մասին հաշվետվություն:</p>
-------------------------------------	--

**30** Գործուղման հետ կապված ծախսերը հրավիրող կողմի միջոցների հաշվին կատարելու դեպքում ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքը ներկայացնելու անհրաժեշտություն չկա

## 2.7 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ

<b>Իրավական շրջանակ</b>	«Գնումների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2010 թվականի դեկտեմբերի 22-ին
	«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003 թվականի հոկտեմբերի 8-ին
	«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշում, ընդունված 2011 թվականի փետրվարի 10-ին
	«Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող գնումների ընթացքում ներկայացված հայտերը և (կամ) գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների կազմավորման ու գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1356-Ն որոշում, ընդունված 2011 թվականի սեպտեմբերի 22-ին
	«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի N 1904-N որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1370-Ն որոշում, ընդունված 2013 թվականի դեկտեմբերի 5-ին

Ընդհանուր առմամբ ԱԼԳՏՀ ծրագրի կողմից ֆինանսավորված ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սկսել ծրագրի գործընկեր չհանդիսացող կազմակերպություններից ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումը: Գնումների ընթացակարգերը և կանոնները սահմանված են Դրամաշնորհի պայմանագրով (Հավելված IV - ԵՄ արտաքին գործառնությունների ներքո դրամաշնորհի շահառուների կողմից գնումների իրականացում): Սա նշանակում է, որ հայկական գլխավոր գործընկերները/գործընկերները ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնումներ կատարելիս պետք է առաջնորդվեն միայն Դրամաշնորհի պայմանագրով սահմանված ԵՄ գնումների ընթացակարգերով, եթե այդ գնումները կատարվում են ԵՄ ծրագրային և/կամ ոչ պետական ու ոչ համայնքային բյուջեների միջոցներից<sup>31</sup>:

Պետական մարմինների կամ պետական հիմնարկների կողմից դրամաշնորհային միջոցների կամ որպես համաֆինանսավորում պետական կամ համայնքային բյուջեներից տված միջոցների հաշվին գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այնուամենայնիվ հայկական շահառուները (ղեկավար գործընկեր կամ գործընկեր) պետք է պահպանեն Դրամաշնորհի պայմանագրով (մասնավորապես 4-րդ հավելվածով) նախատեսված ծագման և ազգային պատկանելիության կանոնները:

**31** Անդրսահմանային համագործակցության ծրագրի նոր ծրագրային փուլում պարտադիր չէ հետևել PRAG-ի կանոններին: Այդ իսկ պատճառով առաջարկվում է դիմել ծրագիրը ղեկավարող մարմնին ամբողջական և թարմացված տեղեկատվություն ստանալու նպատակով:

## Պետական մարմինների և/կամ պետական հիմնարկների կողմից գնումների իրականացում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառվում են հետևյալ կազմակերպությունների նկատմամբ<sup>32</sup>.

- ա) ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ,
- բ) ՀՀ կենտրոնական բանկ,
- գ) պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ,
- դ) պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններ,
- ե) պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ձևավորված միավորումներ (միություններ),
- զ) պետությունից կամ համայնքից կամ ՀՀ կենտրոնական բանկից կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձինք՝ նվիրաբերության կարգով ստացված միջոցների հաշվին կատարվող գնումների մասով,
- է) հանրային կազմակերպություններ:

Պատվիրատուն գնումները կատարում է հաստատված և հրապարակված գնումների պլանի հիման վրա: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Այլ աղբյուրների հաշվին գնումների դեպքում պատվիրատուի ղեկավարը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը հաստատում է գնումների տարեկան պլանը և հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովում դրա հրապարակումը Գնումների տեղեկագրում և գնումների պաշտոնական ինտերնետային կայքում ([www.gnumner.am](http://www.gnumner.am)): Գնումների պլանի ձևը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 896-Ն<sup>33</sup> հրամանով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը ([www.minfin.am](http://www.minfin.am)) ՀՀ-ում գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումը իրականացնող հիմնական մարմինն է: Ֆինանսների նախարարությունը, ի թիվս այլ պարտականությունների, պատասխանատու է նաև գնումների գործընթացի մեթոդական ղեկավարման, պատվիրատուներին մեթոդական օժանդակության ցուցաբերման, Գնումների տեղեկագրի հրապարակման, պետական բյուջեի միջոցների հաշվին գնումների պայմանագրերի հաշվառման համար:

Գնումների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ը ([www.armeps.am](http://www.armeps.am)) պետական ոչ առևտրային և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որն ի թիվս այլ պարտականությունների, տրամադրում է անվճար մասնագիտական խորհրդատվություն՝ պատվիրատուներին և վճարովի՝ մասնակիցներին ու այլ անձանց, գնահատում է մասնակիցների՝ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը, կնքում է շրջանակային համաձայնագրեր, հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարություն:

<sup>32</sup> Այսուհետ մենք կօգտագործենք «պատվիրատու» տերմինը

<sup>33</sup> Տես՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87101>

### Պետական գնումների կիրառելի ընթացակարգերը և շեմերը Հայաստանում

Գնման տեսակը	Նկարագրություն
<p><b>Բաց ընթացակարգ</b></p>	<p>Համարվում է նախընտրելի և հիմնական գնումների մեթոդը: Գնումների մյուս ընթացակարգերը կարող են կիրառվել միայն օրենքով սահմանված դեպքերում: Եթե գնման առարկա հանդիսացող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գինը</p> <ul style="list-style-type: none"> <li>• ≤ 20 միլիոն ՀՀ դրամը և գնման առարկան ունի պարբերական օգտագործման բնույթ և ներառված է օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում, կնքվում է շրջանակային համաձայնագիր,</li> <li>• ≤ 20 ՀՀ դրամը և ձեռք են բերվում միատեսակ հատկանիշներ ունեցող հիմնական սպառման ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ, գնումը կարող է կատարվել պարզեցված ընթացակարգով:</li> </ul>
<p><b>Մրցակցային երկխոսություն</b></p>	<p>Գնումը կարող է կատարվել մրցակցային երկխոսության ընթացակարգով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• եթե պատվիրատուն՝             <ul style="list-style-type: none"> <li>- օ ճշգրիտ (օբյեկտիվորեն) չի կարող օրենքի պահանջներին համապատասխան սահմանել գնման առարկայի բնութագրերը,</li> <li>- օ հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել գնման առարկայի հնարավոր բնութագրերի վերաբերյալ այլընտրանքային առաջարկներ,</li> </ul> </li> <li>• եթե գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկություններ հստակեցնելու նպատակով մասնակիցների հետ բանակցելու անհրաժեշտություն է առաջացել,</li> <li>• պետական և մասնավոր հատվածների գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների կնքման դեպքերում:</li> </ul>
<p><b>Սահմանափակ ընթացակարգ</b></p>	<p>Կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ, որին մասնակցելու իրավունք ունի ցանկացած մասնակից: Հայտ կարող են ներկայացնել միայն պատվիրատուի կողմից հրավեր ստացած նախաորակավորված մասնակիցները:</p>
<p><b>Բանակցային ընթացակարգ</b></p>	<p>Կազմակերպվում է բանակցային ընթացակարգ.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով, եթե.             <ul style="list-style-type: none"> <li>• գնումը կատարվում է ոչ նյութական առանձին ակտիվների ձեռքբերման՝ աշխատանքների նախագծման, հետազոտական, փորձաքննության, փորձարարական կամ գիտական նպատակներով,</li> <li>• արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, որի բնույթը կամ դրան առնչվող ռիսկերը տվյալ գնումը բաց կամ սահմանափակ ընթացակարգով իրականացնելը ժամկետի առումով դարձնում են անհնար,</li> </ul> </li> <li>2) առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե.             <ul style="list-style-type: none"> <li>• գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ աղբյուրից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ,</li> </ul> </li> </ol>



<p><b>Բանակցային ընթացակարգ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել,</li> <li>• ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ,</li> <li>• պատվիրատուն, որևէ անձից կատարելով աշխատանքների կամ ծառայությունների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքների կամ ծառայությունների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝             <ul style="list-style-type: none"> <li>i. լրացուցիչ աշխատանքների կամ ծառայությունների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և</li> <li>ii. դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի 20%-ը,</li> </ul> </li> <li>• ապրանքները ձեռք են բերվում իր ձեռնարկատիրական գործունեությունը վերջնականորեն դադարեցնող կազմակերպությունից կամ անվճարունակության գործով լուծարողներից կամ կառավարիչներից, վարկատուների հետ պայմանավորվածության հիման վրա կամ նմանօրինակ ընթացակարգի միջոցով՝ պատվիրատուի համար առանձնակի նպաստավոր պայմաններով,</li> <li>• գնման գինը չի գերազանցում 1 միլիոն ՀՀ դրամը:</li> </ul>
---	---

## Հիշեցում

Բոլոր պետական մարմինները բաց ընթացակարգով գնումներն իրականացնում են էլեկտրոնային գնումների միջոցով:

ARMEPS-ը (կամ e-PPS, [www.armeps.am](http://www.armeps.am)) ապահով վեր ծրագիր է, որը ներկայացնում է հանրային գնումների մրցույթների իրականացման էլեկտրոնային ընթացակարգերի մի ամբողջական լուծում: Մուտքը համակարգ անվճար է ու բաց: e-PPS-ը լիովին համահունչ է ISO 27001 ստանդարտին և ստացել Impact Level 3 հավատարմագրում, համաձայն HMG տեղեկատվական անվտանգության ստանդարտների: Հայտարարություններն ու հրավերները հրապարակվում են [www.gnumner.am](http://www.gnumner.am) և [www.azdarar.am](http://www.azdarar.am) կայքերում:

Հայաստանի գնումների օրենսդրությունը հիմնվում է ԱՀԿ պետական գնումների մասին համաձայնագրի սկզբունքների վրա: Հայաստանը 2011 թվականի մայիսից հանդիսանում է այս համաձայնագրի կողմ:

## Ոչ պետական կազմակերպությունների կողմից գնումների իրականացում

«Գնումների մասին» ՀՀ օրենքը կիրառվում է այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք ձեռք են բերում ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին:



Հայկական ոչ պետական շահառուները (ղեկավար գործընկեր/գործընկեր) ԵՄ ծրագրային բյուջեից ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերելու դեպքում պետք է միայն կիրառեն ԵՄ գնումների ընթացակարգերը: Գնումների բոլոր ընթացակարգերի համար ԵՄ սահմանել է ընդհանուր կանոններ, որոնք նկարագրված են ԵՄ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի գործնական ուղեցույցում: Մասնավորապես.

- մրցութային փաստաթղթերը պետք է կազմվեն միջազգային լավագույն փորձին համապատասխան: Հայկական գործընկերները, անհրաժեշտության դեպքում, կարող են օգտագործել EuropAid-ի ինտերնետային կայքում տեղադրված ԵՄ արտաքին գործողությունների շրջանակներում պայմանագրային ընթացակարգերի գործնական ուղեցույցում օգտագործվող օրինակելի փաստաթղթերը,
- մրցույթի հայտերի և մասնակցության դիմումների ստացման համար նախատեսված ժամկետները պետք է բավականաչափ երկար լինեն, որպեսզի շահագրգիռ կողմերը բավարար և անհրաժեշտ ժամանակ ունենան իրենց հայտերը պատրաստելու և ներկայացնելու համար (օրինակ 60 օր մատակարարումների և 90 օր աշխատանքների միջազգային մրցույթների համար, 30 օր մատակարարումների և 60 օր աշխատանքների տեղական մրցույթների համար),
- 60,000 և ավելի եվրո արժողության մրցույթներին մասնակցության բոլոր դիմումները և մրցութային հայտերը պետք է գնահատվեն և դասակարգվեն գնահատման հանձնաժողովի կողմից՝ ըստ բացառման, ընտրության և պայմանագրի կնքման չափանիշների, որոնք հայտարարվում են նախապես՝ մրցութային փաստաթղթերում:

### Ծագման և ազգային պատկանելիության կանոններ

ԵՄ կանոնակարգերը և Դրամաշնորհի պայմանագրի 4-րդ հավելվածը բոլոր շահառուներից և գործընկերներից պահանջում են հարգել ծագման և ազգային պատկանելիության վերաբերյալ կանոնները:

- Ծագման վերաբերյալ կանոնը ենթադրում է, որ ծրագրի գործընկերների կողմից ձեռք բերվող բոլոր ապրանքների ծագման վայրը պետք է լինեն ներքոնշյալ երկրները: Այն դեպքում, երբ պահանջվում է սույն կանոնի կատարում, պայմանագրի կողմերը պետք է ներկայացնեն ծագման վայրի ապացույց՝ առաջին հաշիվ ապրանքագրի ներկայացումից ոչ ուշ:
- Ազգային պատկանելիության վերաբերյալ կանոնը ենթադրում է, որ մասնակցությունը մրցութային ընթացակարգերին բաց է ներքոնշյալ երկրների քաղաքացի համարվող կամ դրանցում հիմնադրված ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար: Այս կանոնը չի տարածվում դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող պայմանագրի կողմ հանդիսացող ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող փորձագետների վրա:

Սակայն ծագման նշված կանոնները կիրառվում են միայն 100,000 Եվրո գումարին համարժեք կամ այն գերազանցող մատակարարումների ձեռք բերման նկատմամբ:

<b>ԵՄ անդամ պետություններ</b>	Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Եստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդեռլանդներ, Շվեդիա, Չեխիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա
<b>ԵՀԳԳ գործընկեր երկրներ</b>	Հայաստան, Ալժիր, Ադրբեջան, Բելառուս, Եգիպտոս, Թունիս, Իսրայել, Լիբանան, Լիբիա, Հորդանան, Մարոկկո, Մոլդովա, Պաղեստին, Ռուսաստանի Դաշնություն, Սիրիա, Վրաստան, Ուկրաինա:



<b>Նախաանդամակցության փուլում գտնվող երկրներ</b>	Ալբանիա, Բոսնիա, Թուրքիա, Կոսովո, Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն Մակեդոնիա, Մոնտենեգրո, Սերբիա,
<b>Եվրոպական տնտեսական տարածք</b>	Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա
<b>Միջազգային կազմակերպություններ</b>	

**Դրամաշնորհի պայմանագրի (պայմանագրի 4-րդ հավելված) ներքո գնումների գործող կիրառելի շեմերը**

Ծառայություններ	≥ EUR 300 000 Միջազգային սահմանափակ մրցույթ	< EUR 300 000 բայց > EUR 60 000 Առանց հրապարակման մրցակցային բանակցության ընթացակարգ		≤ EUR 60 000 Շահառուի կողմից հաստատված ընթացակարգ <sup>35</sup>
Մատակարարումներ	≥ EUR 300 000 Միջազգային բաց մրցույթ	< EUR 300 000 բայց ≥ EUR 100 000 Տեղական մակարդակով հայտարարված բաց մրցույթի ընթացակարգ	< EUR 100 000 բայց > EUR 60 000 Մրցակցային բանակցության ընթացակարգ	
Աշխատանքներ	≥ EUR 5 000 000 Միջազգային բաց մրցույթ	< EUR 5 000 000 բայց ≥ EUR 300 000 Տեղական մակարդակով հայտարարված բաց մրցույթի ընթացակարգ	< EUR 300 000 բայց > EUR 60 000 Մրցակցային բանակցության ընթացակարգ	

<b>Գործնական խորհուրդներ</b>	Գնումների մասին հայկական օրենսդրությունը չունի ծագման և ազգային պատկանելիության կանոնների պահանջ: Այնուամենայնիվ, դրամաշնորհային ծրագրերի հայկական գործընկերները պետք է հետևեն այդ կանոններին, նույնիսկ եթե նրանք օգտագործում են համաֆինանսավորումը: Այլապես նրանց կողմից կատարված ծախսերը չեն համարվի թույլատրելի:
	Ներքին գնումների ընթացակարգերը սահմանելիս հայկական գործընկերները կարող են առաջնորդվել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով:
	«Գնումների մասին» ՀՀ օրենքը չի կիրառվում ոչ հաստիքային աշխատակիցների ընդունման գործընթացի նկատմամբ: Պետական մարմինները կարող են վարձակալել ոչ հաստիքային աշխատակիցներ՝ առանց մրցույթի: Իսկ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը պետք է կատարվի գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան:

**35** Այնուամենայնիվ պետք է պահպանվեն Դրամաշնորհի պայմանագրի 4-րդ հավելվածի 1, 2 և 3-րդ բաժիններով սահմանված կանոնները և ընթացակարգերը



## 2.8 ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ և ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<b>Իրավական շրջանակ</b>	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին
	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, ընդունված 1999 թվականի ապրիլի 14-ին
	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2005 թվականի հուլիսի 8-ին
	«Գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումները և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 165-Ն որոշում, ընդունված 2012 թվականի փետրվարի 9-ին

Սեփականության իրավունքը համարվում է քաղաքացիական հիմնարար սկզբունքներից մեկը, որը սահմանված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածում և պաշտպանվում է ՀՀ սահմանադրությամբ: Սեփականության իրավունքներն կարգավորվում և պաշտպանվում են նախևառաջ ՀՀ Սահմանադրությամբ, որը երաշխավորում է սեփականության բոլոր տեսակների պաշտպանությունը և այն տնօրինելու ու օգտագործելու բոլորի իրավունքը:

Համաձայն Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» 2014 թվականի զեկույցի, սեփականության գրանցման ցուցանիշով Հայաստանը դասակարգվել է 5-րդն աշխարհում, նշելով, որ, համաձայն օրենսդրության, գույքի գրանցման համար կիրառվում է ընդամենը երեք ընթացակարգ և անհրաժեշտ է առավելագույնը յոթ օր:

Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ընթացակարգերը սահմանած են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Նկատի ունենալով ծրագրի առանձնահատկությունը, հիմնականում կներկայացվի երկու տիպի գույքի գրանցման ընթացակարգերը.

- Անշարժ գույքի գրանցում,
- Տրանսպորտային միջոցների գրանցում:

Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցումն իրականացվում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի միջոցով, որը բաղկացած է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ԱԳԿՊԿ, [www.cadastre.am](http://www.cadastre.am))<sup>36</sup> և նրա տարածքային ստորաբաժանումներից: ԱԳԿՊԿ-ն իրականացնում է անշարժ և շարժական գույքի (բացառությամբ տրանսպորտային միջոցների, դրանց կցորդների և ինքնագնաց մեքենաների) նկատմամբ իրավունքների գրանցումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը:

**36** [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) ԱԳԿՊԿ-ի էլեկտրոնային համակարգն է, որը հնարավորություն է տալիս առցանց կարգով ներկայացնել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմումները և հետևել դրանց իրականացման ընթացքին: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմումներ և դրանց կից փաստաթղթեր առցանց կարող են ներկայացնել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր ստացած և կայքում գրանցված անձինք:



Հողամասի և շինությունների նկատմամբ բոլոր իրավունքներն ու գործարքներն ենթակա են պետական գրանցման տարածքային կադաստրային ստորաբաժանումներում: Գույքի նկատմամբ իրավունքները համարվում են գրանցված գրանցման մատյանում սահմանված գրառումները կատարելու և պետական գրանցման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից հաստատվելու պահից (գրանցման պահից): Գրանցման ենթակա են գույքի նկատմամբ

- սեփականության,
- օգտագործման,
- հիփոթեքի,
- հողամասի կառուցապատման,
- սերվիտուտի,
- գրավի,
- լիզինգի պայմանագրով վարձակալության,
- անշարժ գույքի օտարման,
- շարժական գույքի գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության,
- և օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքները:

Իրավունքի պետական գրանցումից անմիջապես հետո տրվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կատարվում է պետական գրանցման դիմումը ներկայացվելու օրվանից 4-րդ աշխատանքային օրը (թեև դիմորդի ցանկությամբ գրանցումը կարող է կատարվել ավելի կարճ ժամկետում) : Դիմումի հետ պետք է ներկայացվեն նաև հետևյալ փաստաթղթերը.

- Դիմորդի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
- պետական տուրքի, պետական գրանցման համար վճարի մուծման անդորրագրերը,
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված այլ փաստաթղթեր:

Շարժական գույքի գրանցման դեպքում դիմորդը պետք է ներկայացնի.

- Դիմորդի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
- պետական տուրքի, պետական գրանցման համար վճարի մուծման անդորրագրերը,
- Շարժական գույքի գրավի պայմանագիրը:

Շարժական գույքի գրանցումը կատարվում է դիմումը ներկայացվելու օրվանից 2-րդ օրը:

Համաձայն ՀՀ օրենսդրության տրանսպորտային միջոցի սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքներն ենթակա են պետական գրանցման, որն իրականացվում է ՀՀ ոստիկանության և վերջինիս տարածքային ստորաբաժանումների կողմից: Տրանսպորտային միջոցի գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումն իրականացվում է գործարքի կատարման օրվանից հետո` 5-օրյա ժամկետում:

**37** ա) 25,000 դրամ` սովորական գրանցման ընթացակարգի դեպքում (4-րդ աշխատանքային օրը),  
բ) 2 գործակցով` պետական գրանցման դիմումը ներկայացվելու օրվանից 3-րդ աշխատանքային օրը պետական գրանցում կատարելու դեպքում,  
գ) 3 գործակցով` պետական գրանցման դիմումը ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը պետական գրանցում կատարելու դեպքում:



## Գրանցման տուրքեր

№	Գրանցման դիմումի տեսակը	Տուրք (ՀՀ դրամ)
1	Անշարժ գույքի իրավունքների պետական գրանցում	1,000
2	Շենքերի և շինությունների վարձակալության և ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում	1,000
3	Անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրերի պետական գրանցում	1,000
4	Շարժական գույքի (բացառությամբ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների) գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում	2,000
5	Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում	1,000
6	Սերվիտուտի պայմանագրի պետական գրանցում	1,000

## Սարքավորումների, ներդրումների, մտավոր սեփականության և ծրագրի արդյունքների նկատմամբ սեփականություն

Ծրագրի արդյունքների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի սեփականության, ինչպես նաև ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ձեռք բերված ապրանքների և կատարված մատակարարումների նկատմամբ սեփականության պահանջները նկարագրված են դրամաշնորհի պայմանագրի «Ընդհանուր պայմաններ» բաժնի 7-րդ հոդվածում, որոնք սովորաբար ենթարկվում են փոփոխության դրամաշնորհի պայմանագրի «Հատուկ պայմաններ» բաժնում:

Ծրագրի սեփականության հարցերին առնչվող բոլոր հատուկ դրույթները կարող են ներառվել Գործընկերության համաձայնագրում: Այս փաստաթղթում ծրագրի գործընկերները կարող են նկարագրել և հատկորոշել իրենց իրավունքները թե՛ ծրագրի մեկնարկում և թե՛ դրա ավարտին՝ հստակ կերպով նշելով մտավոր և արդյունաբերական իրավունքների բաշխման և սարքավորումների սեփականության պայմանները:

Ծրագրի ավարտին, ծրագրային միջոցների հաշվին ձեռք բերված սարքավորումները, մեքենաները և մատակարարումները պետք է փոխանցվեն շահառուներին, համաձայն դրամաշնորհի պայմանագրի «սեփականության փոխանցման» կանոնի: Այս դեպքում 5,000 Եվրոն գերազանցող արժեք ունեցող ապրանքների փոխանցումն հավաստող փաստաթղթերի (հանձնման-ընդունման ակտ) կրկնօրինակները պետք է կցվեն ծրագրի եզրափակիչ հաշվետվությանը:

Հայկական կազմակերպությունների սարքավորումների փոխանցումը պետք է համապատասխանի ազգային օրենսդրության պահանջներին: Այն պետք է ուղեկցվի սարքավորումների ստացումը և դրանք ընկերության հաշվեկշռում գրանցումը հավաստող համապատասխան փաստաթղթերով:

Մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքները և ծրագրի արդյունքներն ու փաստաթղթերը, ըստ էության, պատկանում են գործընկերներին, քանի որ նրանք են իրականացնում ծրագիրը: Սակայն Եվրոպական հանձնաժողովը իրավունք ունի ազատորեն օգտագործել ծրագրին առնչվող փաստաթղթերը (բացառությամբ ծրագրի հաշվետվությունների)՝ պայմանով, որ դրանք չեն խախտում գոյություն ունեցող արդյունաբերական և մտավոր սեփականության իրավունքները:

## ՄԱՍ 3

# ԾՐԱԳՐԻ ԱՌԻԴԻՏ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



### 3.1 Ծախսերի Գևազմսոխ (ԻնՊոես ԳՏԵԼ և ՆՇԱՆԱԿԵԼ ԱՌԴԻՏՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ)

Կախված կոնկրետ ծրագրի պահանջներից (ինչպես ներկայացված է PRAG-ում և Դրամաշնորհի պայմանագրի գլխավոր պայմաններում), ֆինանսական հաշվետվությունների հետ միասին պետք է ներկայացվի նաև ծախսերի ստուգման հաշվետվություն:

Ծախսերի ստուգման հաշվետվությունը պետք է ներկայացված լինի անկախ աուդիտորի կողմից, որը հանդիսանում է Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) անդամ կամ պարտավորվում է իրականացնել աուդիտը ՀՄՖ-ի ստանդարտներին և վարքագծի կանոններին համապատասխան: Աուդիտորը ստուգում է, թե արդյոք ծրագրի գործընկերների կողմից ներկայացված ծախսերն իրականում առաջացել են, ստույգ են և թույլատրելի ըստ Դրամաշնորհի պայմանագրի: Ստուգման ավարտին, նրանք պատրաստում են ծախսերի ստուգման հաշվետվություն ըստ դրամաշնորհի պայմանագրի 7-րդ հավելվածով տրված ձևանմուշի: Ծախսերի ստուգման կամ աուդիտի ծախսերը կարող են կատարվել ծրագրի գործընկերների կողմից ծրագրի թույլատրելի ծախսերի շրջանակներում:

#### Աուդիտորի նշանակում

Քանի որ հայկական աուդիտորական ընկերությունները չեն հանդիսանում ՀՄՖ-ի անդամ, ուստի կա աուդիտոր նշանակելու երկու հնարավոր ուղի.

- Նշանակել ՀՄՖ-ի անդամ հանդիսացող և Հայաստանում ներկայացուցչություն ունեցող միջազգային աուդիտորական ընկերություն<sup>39</sup>,
- Գտնել հայկական այնպիսի աուդիտորական ընկերություն, որն ունի ԵՄ կողմից ֆինանսավորվող միջազգային տեխնիկական աջակցության ծրագրերի աուդիտ կատարելու փորձ:

Հայաստանում գործող աուդիտորական ընկերությունների ամբողջական ցանկին կարելի է ծանոթանալ հետևյալ կայքից՝ <http://www.banks.am>.

Հայկական գործընկերները պետք է պատրաստ լինեն թույլտվություն տալ Եվրոպական Հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակին, Աուդիտորների Եվրոպական դատարանին և պայմանագրային մարմնի կողմից լիազորված որևէ արտաքին աուդիտորի՝ իրականացնելու արտաքին աուդիտորի իրականացնելու անհրաժեշտ ստուգումներ:

**38** Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի աուդիտորը աուդիտորի որակավորում ստացած ֆիզիկական անձ է: Համաձայն Նույն օրենքի 6-րդ հոդվածի «Աուդիտորական գործունեությունը ֆինանսական հաշվետվությունների և (կամ) ֆինանսական հաշվետվություններ ներառող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության աուդիտի և (կամ) աուդիտին հարակից ծառայությունների (աուդիտորական դիտարկում, համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլյացիա (տեղեկատվության հավաքում) իրականացում) է:

**39** KPMG, PriceWaterhouseCoopers և Ernst & Young ընկերությունները Հայաստանում ունեն գրասենյակներ և առաջարկում են ծառայություններ բիզնեսի չորս հիմնական բնագավառներում՝ աուդիտ, ֆինանսական խորհրդատվություն, հարկեր և խորհրդատվություն: Grant Thornton ՓԲԸ-ն, որը հանդիսանում է Grant Thornton International ընկերության անդամ, միջազգային հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերություններից մեկն է, որը գործելով Հայաստանում տրամադրում է նաև աուդիտին առնչվող ծառայություններ: Վերջերս հայկական շուկա է մուտք գործել աշխարհի հինգերորդ խոշոր աուդիտորական ընկերություն համարվող Binder Dijker Otte & Co ընկերությունը: BDO Armenia ընկերության կողմից առաջարկվող ծառայությունները ներառում են աուդիտ և հարակից ծառայություններ, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվողականություն և այլն:





### 3.2 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ, ԳՆԱՀԱՏՈՒՄ և ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայաստանում չկա ոչ պետական կազմակերպությունների կողմից ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը կանոնակարգող որևէ իրավական ակտ:

Սակայն, քանի որ ծրագրի իրականացման ընթացքում մոնիտորինգի հիմնական նպատակն է դիտարկել ծրագրի ընթացքը, բացահայտել հնարավոր խնդիրները և, անհրաժեշտության դեպքում, կատարել շտկումներ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ԵՄ ծրագրերի բաժինը իրականացնում է ծրագրերի ներքին մոնիտորինգ, որն իրականացվում է կանոնավոր հանդիպումների միջոցով: Մոնիտորինգի հանդիպումները, որին մասնակցում են ծրագրի գործընկերները, իրենցից ներկայացնում են կարճ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում է ծրագրի ընթացքը: Մասնավորապես.

- նախորդ ժամանակահատվածում կատարված աշխատանքները և ձեռք բերված արդյունքները,
- առաջիկա ամիսների համար նախատեսված գործողությունները,
- իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները,
- հնարավոր լուծումները և ծրագրի հետագա իրականացմանն առնչվող առաջարկները:

Ինչ վերաբերում է պետական մարմիններին և պետական հիմնարկներին, նրանք պետք է հետևեն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Պետական դրամաշնորհների հաշվառման և հաշվետվությունների կազմման ու հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշմամբ սահմանված հաշվետվողականության պահանջներին: Պետական մարմինները և պետական հիմնարկները եռամսյակային և տարեկան պարբերականությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում ստացված դրամաշնորհների և դրանց օգտագործման վերաբերյալ հաշվետվություն՝ օգտագործելով ՀՀ ֆինանսների նախարարի 2003 թվականի մայիսի 21-ի թիվ 449-Ն որոշմամբ սահմանված ձևանմուշը:

Ծրագրի գործընկերները պետք է նաև նկարագրական հաշվետվություն ներկայացնեն Պայմանագրային մարմին: Այս հաշվետվության մանրամասները նկարագրված են Դրամաշնորհի պայմանագրի Հատուկ պայմաններ բաժնում և Գլխավոր պայմանների հոդված 2-ի և 15-ի լրացումներում: Հաշվետվության ձևը տրված է Դրամաշնորհի պայմանագրի 6-րդ հավելվածում:

<p><b>Գործնական խորհուրդներ</b></p>	<p>Ծրագրի մեկնարկում Դուք Ձեր գործընկերների հետ պետք է հստակորեն պայմանավորվեք հետևյալ հարցերի շուրջ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• յուրաքանչյուր գործընկերոջ հաշվետվողականության պարտավորությունները և դերը;</li> <li>• հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը և վերջնաժամկետները (յուրաքանչյուր միջոցառման, յուրաքանչյուր գնման համար, յուրաքանչյուր ամիս և այլն);</li> <li>• գործընկերների կողմից օգտագործվելիք հաշվետվության ձևը (այնպես, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ ներառել ընդհանուր հաշվետվության մեջ);</li> <li>• հաշվետվության լեզուն:</li> </ul>
-------------------------------------	---



# ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



**Հավելված 1.** Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակություն ծանուցման ձևանմուշ

**Հավելված 2.** Հարկազատման տեղեկանքի ձևանմուշ

**Հավելված 3.** ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից հարկազատման տեղեկանքներ ձեռքբերելու համար անհրաժեշտ գրության ձևանմուշ

**Հավելված 4.** Հարկային արտոնություններից օգտվելու նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն հասցեագրված գրության ձևանմուշ

**Հավելված 5.** ԱԲԳՏՀ ծրագրերի համար կարևոր իրավական ակտերի ցանկ

**Հավելված 6.** Հարց ու պատասխան

**Հավելված 7.** Գործընթացների ամփոփ նկարագիր

**Հավելված 8.** Հարկային արտոնություններ ստանալու գործընթացի հիմնական քայլեր

**Հավելված 9.** Սահմանումներ

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԱՆՆՄՈՒՇ

Հայաստանի Հանրապետությունում  
Եվրոպական Միության  
պատվիրակության ղեկավար

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0002, Ֆրիկի 21  
Թեմա՝ Դրամաշնորհի պայմանագիր No. <Նշել պայմանագրի համարը>  
Անվանում: <Նշել ծրագրի անվանումը>  
Իրականացնող ղեկավար/գործընկեր կազմակերպություն <Նշել Ձեր կազմակերպության անվանումը>

Հարգելի պարոն/տիկին \_\_\_\_\_,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ <ծրագիր իրականացնող կազմակերպության անունը>; <երկիրը> ԵՄ կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության Տարածքային համագործակցության ծրագրի շրջանակներում <ծրագրի անվանումը> իրականացման նպատակով կնքել է դրամաշնորհի պայմանագիր:

<Ձեր կազմակերպության անվանումը>; <երկիրը> ներգրավված է ծրագրում որպես <Առաջատար գործընկեր/Գործընկեր>: Մեր կազմակերպությանն հանձնարարված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնումներն իրականացվում է ԵՄ նշված միջոցների հաշվին:

Այդ կապակցությամբ խնդրում ենք տրամադրել գրություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝ հավաստելով որ նշված ծրագիրն օժտվում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի միջև 2006 թվականի ապրիլի 4-ին կնքված և ՀՀ Ազգային ժողովից կողմից վավերացված Շրջանակային Համաձայնագիր 3-րդ հոդվածով նախատեսված հարկային արտոնություններից:

Կից ներկայացվում է՝ <կցվող փաստաթղթերի անվանումները>

Հարգանքով՝



## ՀԱՎԵԼՎԱԾԶ. ՀԱՐԿԱԶԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԶԵՎԱՆՄՈՒՇ

### ՏԵՂԵԿԱՆՔ N

..... 200.... թ.

Սույնով հաստատվում է, որ .....  
(գործողությունն իրականացնող կազմակերպության (կամ դրա մասնաճյուղի,

ներկայացուցչության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, իրավաբանական

անձի գտնվելու կամ ֆիզիկական անձի բնակության վայրը, առկայության դեպքում՝ ՀՎՀՀ-ն)

Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող գործողության .....  
գործողության անվանումը,

.....  
(ապրանքների անվանումը, հաշիվ-ապրանքագրի, մաքսային հայտարարագրի,

շրջանակներում ներմուծում է.....  
գումարը՝ թվերով և փակագծերում՝ տառերով

հազ. դրամ ընդհանուր արժեքը.....  
(ապրանքների անվանումը, հաշիվ-ապրանքագրի, մաքսային հայտարարագրի,

.....  
ապրանքատրանսպորտային բեռնագրի համարները և տրման ամսաթվերը)

Ձեռք է բերում ապրանքներ (մատուցվում են ծառայություններ) .....  
(ապրանքներ մատակարարողի,

.....  
ծառայություններ մատուցողի անվանումը (անունը, ազգանունը), իրավաբանական հասցեն

.....  
(բնակության վայրը), ՀՎՀՀ-ն, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների

.....  
մատուցման հիմքերը (հաշիվ-ապրանքագրի, ընդունման-հանձնման ակտի համարները և տրման

.....  
ամսաթվերը), մատակարարվող ապրանքների, մատուցվող ծառայությունների համառոտ

.....  
նկարագրությունը և դրանց ընդհանուր արժեքը (թվերով և փակագծերում՝ տառերով)

Մատակարարված ապրանքների (մատուցված ծառայությունների) դիմաց վճարումը կատարվում է  
Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող գործողության հաշվին:

Հայաստանի Հանրապետության  
Էկոնոմիկայի նախարարության  
պատասխանատու անձ .....  
Կ.Տ. (ստորագրությունը, անունը, ազգանունը)



### ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՐԿԱԶՎՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ԶԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՆՄՈՒՇ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության  
աշխատակազմի ղեկավար

\_\_\_\_\_

Հարգելի պարոն/տիկին \_\_\_\_\_

Սույնով տեղեկացնում եմք, որ <Ձեր կազմակերպության անվանումը> <տարեթիվ, ամիս, օր>  
իրականացնում է <ծրագրի անվանումը>, որը ֆինանսավորվում է ԵՄ կողմից:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի  
միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր  
վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության  
2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1112-Ն որոշում, ինդրում եմ տրամադրել հարկազատման  
տեղեկանքների գիրք:

Հարգանքով,



## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար

Հարգելի պարոն/տիկին \_\_\_\_\_

Սույնով տեղեկացնում եմք, որ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող <ծրագրի անվանումը> դրամաշնորհային ծրագրի շրջանակներում <Ձեր ընկերության անվանումը> <գումարը թվով և տառերով> ՀՀ դրամ գումարի չափով ծառայություններ է ստացել/ապրանքներ է ձեռք բերել <ապրանքներ/ծառայություններ մատակարարող ընկերության անվանումը> ընկերությունից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի “Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Հանձնաժողովի միջև կնքված Շրջանակային Համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին” N 1112-Ն որոշման՝ խնդրում եմ Ձեր աջակցությունը ԱԱՀ-ից/մաքսատուրքից ազատվելու գործընթացում:

Կից ներկայացնում եմք.

1. Տեղեկանք N \_\_\_\_\_
2. Վերը նշված կազմակերպության հետ կնքված պայմանագրի և համապատասխան հաշիվ ապրանքագրի/մաքսային հայտարարագրի պատճենները
3. Հանձնման-ընդունման ակտը
4. Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից ներկայացված նամակ-հավաստագիրը:

<Այլ փաստաթղթերի անվանումները>

Առդիր՝ \_\_\_\_\_ Էջ:

Հարգանքով



## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԱԼԳՏՀ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԱՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

Համաձայնագրեր	Օրենսգրք, օրենք	Որոշումներ, հրամաններ, պարզաբանումներ	Ինտերնետային կայքեր	Այլ
Երջանակային Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովի միջև	ՀՀ քաղաքացիական օրենսգրք	«Պետական գրամաշտրիների հաշվառման և հաշվետվությունների կազմման ու հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 32 որոշում	www.eaptc.eu	ԵՄ-Հայաստան գործընկերությունների ծրագիր
Համաձայնագիր Գործընկերության և համագործակցության մասին մի կողմից՝ Եվրոպական Հանագործակցությունների ու դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև	ՀՀ Մաքսային օրենսգրք	«Հայաստանի Հանրապետության պետական ու այլ հիմնարկերի արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 404 որոշում	http://ec.europa.eu/europeaid/where/ neighbourhood/overview/index_en.htm	
	ՀՀ սախառանքային օրենսգրք	«Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի թիվ 48 որոշում	http://eeas.europa.eu/delegations/armenia	
	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով ստիպատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 1112-Ն որոշում	www.mineconomy.am	



	<p><a href="http://www.pao-armenia.am">www.pao-armenia.am</a></p>	<p>«Ճառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գինձառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող ռիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող ռիվանագետի և նրա ընտանիքի անդամների` Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշում</p>	<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք</p>	
	<p><a href="http://www.mta.gov.am">www.mta.gov.am</a></p>	<p>«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշում</p>	<p>«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենք</p>	
	<p><a href="http://www.adgf.am">www.adgf.am</a></p>	<p>«Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող գնումների ընթացքում ներկայացված հայտերը և (կամ) գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների կազմավորման ու գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1356-Ն որոշում</p>	<p>«Վարձան հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենք</p>	



Համաձայնագրեր	Օրենսգիրք, օրենք	Որոշումներ, հրամաններ, պարզաբանումներ	Ինտերնետային կայքեր	Այլ
	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք	«Էլեկտրոնային ձևով գումարների կատարման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 31-ի N 1904-N որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1370-Ն որոշում	<a href="http://www.cba.am">www.cba.am</a>	
	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք	«Գույքի սկստմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումները և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի թիվ 165-Ն որոշում	<a href="http://www.banks.am">www.banks.am</a>	
	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք	«Հանրապետական գործարար մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին» ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշում	<a href="http://www.rates.am">www.rates.am</a>	
	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք	«Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, անիտիման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 930-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի փետրվարի 4-ի թիվ 80-Ն հրաման	<a href="http://www.mfa.am">www.mfa.am</a>	

	www.minfin.am	«Բյուջետային հիմնարկների արտաբյուջետային սխեմների գոյացման և տնօրինման նախահաշվի օրինակելի ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 918-Ն հրամանն ուժեղ կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի փետրվարի 23-ի թիվ 94-Ն հրաման	«Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենք	
	www.gnumner.am	«Հայաստանի Հանրապետության օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների և աստիճանային վարկերի վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևերը, դրանց կազմման և ներկայացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2003 թվականի մայիսի 21-ի թիվ 449-Ն հրաման	«Եվամտային հարկի մասին» ՀՀ օրենք	
	www.armeps.am	«Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» ՀՀ կառավարության արձևադրյալի հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 3 պաշտոնական պարզաբանում	«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք	
	www.azdarar.am		«Գնումների մասին» ՀՀ օրենք	
	www.arlis.am		«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք	
	www.cadastre.am		«Գույքի սկատամաքի իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք	



www.e-gov.am					
«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք	«Տերական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք	«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք	«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք

## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց	Ինչո՞ւ բացել բանկային հաշիվ:
Պատասխան	<p>Բանկային հաշիվները Ձեր դրամական միջոցները կառավարելու բավականին հարմար միջոց են, որոնք ապահովում են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Դրամական միջոցների պահպանման անվտանգությունը - բանկերն երաշխավորում են Ձեր դրամական միջոցների անվտանգությունը և հասանելիությունը,</li> <li>• Ձեր դրամական միջոցների շարժի կառավարումը - Բանկային հաշիվ ունենալու դեպքում Դուք բանկից կստանաք ամսական քաղվածք, որտեղ արտացոլված կլինեն Ձեր դրամական միջոցների մուտքերը և ելքերը: Դա Ձեզ հնարավորություն կտա ունենալու Ձեր դրամական միջոցների շարժի ճշգրիտ պատկերը և հետևաբար կօգնի ճշգրիտ պլանավորել Ձեր բյուջեն,</li> <li>• Դրամական միջոցների մշտական հասանելիություն - Ցանկացած ժամանակ՝ բանկի աշխատանքային ժամերին, կարող եք դիմել բանկ և վերցնել Ձեր գումարները,</li> <li>• Տոկոսային եկամուտ - Շատ բանկեր հաշվում առկա դրամական միջոցների դիմաց պատրաստ են վճարել տոկոսագումարներ: Տոկոսները հնարավորություն կտան ժամանակի ընթացքում ավելացնել Ձեր գումարները:</li> </ul>

Հարց	Որտե՞ղ կարելի է բացել բանկային հաշիվ:
Պատասխան	Հայաստանում բանկային հաշիվ հնարավոր է բացել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերում:

Հարց	ՀՀ կազմակերպության և ոչ ռեզիդենտ կազմակերպության միջև իրականացվող գործարքի համար անկանխիկ վճարումը կարո՞ղ է արդյոք իրականացվել արտարժույթով:
Պատասխան	Անհրաժեշտ է ղեկավարվել «Արժութային կարգավորման և վերահսկողության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005թ. հոկտեմբերի 11-ի «ՀՀ-ում արժութային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» թիվ 3 պարզաբանումով: Միաժամանակ հարկ է նշել, որ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող վճարումները արտարժույթով կարող են իրականացվել միայն անկանխիկ ձևով:

Հարց	Ե՞րբ կարող է օտարերկրյա քաղաքացին մուտք գործել Հայաստան:
Պատասխան	Օտարերկրյա քաղաքացին կարող է մուտք գործել ՀՀ տարածք, վավերական անձնագրի առկայության, մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի հիման վրա և սահմանային հսկողություն իրականացնող մարմնի թույլտվության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով:



Հարց	<b>Որքա՞ն ժամանակ կարող է Հայաստան ժամանելու իրավունք ունեցող օտարերկրացին գտնվել Հայաստանում առանց այցելության մուտքի վիզայի:</b>
Պատասխան	Այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է ՀՀ ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ:
Հարց	<b>Որտե՞ղ կարելի է ձեռք բերել Հայաստան մուտքի վիզա:</b>
Պատասխան	Մուտքի վիզա տրվում է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում <sup>40</sup> և հյուպատոսական հիմնարկներում <sup>41</sup> , ՀՀ սահմանային անցման կետերում (պայմանական վիզա) կամ էլեկտրոնային կարգով (e-Visa <sup>42</sup> ): Այցելուները մուտքի վիզա կարող են ձեռք բերել նաև «Չվարթնոց» միջազգային օդանավակայանում: Այնուամենայնիվ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հրապարակել է այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա կարող են ստանալ միայն օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում և միայն հրավերի հիման վրա:
Հարց	<b>Որո՞նք են Հայաստան մուտքի վիզայի տեսակները:</b>
Պատասխան	<p>Հայաստան մուտքի վիզայի տեսակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) այցելության մուտքի վիզա՝ հարազատներին այցելելու, զբոսաշրջության, կրթական հաստատություններում ուսանելու, տարբեր միջոցառումներին մասնակցելու նպատակով այցելության համար: Այն տրվում է մեկանգամյա մուտքի կամ մինչև մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար,</li> <li>բ) պաշտոնական մուտքի վիզա՝ պաշտոնական (ծառայողական) անձնագիր կրող անձանց համար,</li> <li>գ) դիվանագիտական մուտքի վիզա՝ դիվանագիտական անձնագիր կրող կամ դիվանագիտական կարգավիճակ ունեցող անձանց համար,</li> <li>դ) տարանցիկ մուտքի վիզա՝ Հայաստանի տարածքով երթևեկողների համար մեկ մուտքի կամ մեկ տարի վավերականության ժամկետով բազմակի մուտքի համար՝ մինչև 3 օր գտնվելու ժամկետով՝ առավելագույնը մինչև 4 օր երկարաձգելու հնարավորությամբ:</li> </ul>
Հարց	<b>Կա՞ն արդյոք Վրաստանի քաղաքացիների համար մուտքի վիզայի հատուկ պահանջներ:</b>
Պատասխան	Վրաստանի քաղաքացիների համար ՀՀ մուտք գործելու հատուկ պահանջներ չկան: Վրաստանի քաղաքացիություն ունեցող անձանց համար ՀՀ մուտք գործելու դեպքում գործում է առանց վիզայի մուտքի ռեժիմ: Վրաստանի քաղաքացիները ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում:

**40** ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ցանկին ծանոթանալու նպատակով խնդրում ենք այցելել <http://mfa.am/en/by-countries/>

**41** ՀՀ հյուպատոսական հիմնարկների ցանկին ծանոթանալու նպատակով խնդրում ենք այցելել <http://mfa.am/en/consulates/>

**42** [https://evisa.mfa.am/pls/dbms/evisa\\_n.put\\_application\\_p0](https://evisa.mfa.am/pls/dbms/evisa_n.put_application_p0)

Հարց	Եթե աշխատակիցը գործուղվել է ք. Գյումրի և չի ներկայացրել հիմնավորող փաստաթղթեր տրանսպորտային և գիշերավարձի ծախսերի վերաբերյալ, ինչպե՞ս պետք է կատարել գործուղման վճարումը:
Պատասխան	<p>Համաձայն ՀՀ կառավարության 2335-Ն որոշման Հայաստանի Հանրապետության տարածքում ծառայողական գործուղման մեկնած աշխատողին գործուղում մեկնելուց առաջ գիշերավարձը և ճանապարհաձախսը վճարվում է կարգով սահմանված նվազագույն գումարի չափով: Գործուղումից վերադառնալուց հետո, գործուղման փաստացի կատարված ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացվելու դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում հատուցման ենթակա է համարվում գիշերավարձի և ճանապարհաձախսի գումարի տարբերությունը, բայց ոչ ավելի, քան որոշմամբ սահմանված առավելագույն չափը: Միաժամանակ ուսումնասիրեք նաև պայմանագիրը և խորհրդակցեք ԱԳՏՀ ծրագրի ղեկավարի հետ:</p>

Հարց	Հասարակական կազմակերպությունը կազմակերպում է անվճար դասընթացներ, որին մասնակցելու են նաև մարզերից մասնակիցներ: Մասնակիցներին պետք է վճարվի նաև օրապահիկ: Ճի՞շտ է արդյոք, իրավական տեսակետից, օրապահիկ վճարելը, քանի որ նրանք չեն հանդիսանում ընկերության աշխատակիցներ:
Պատասխան	<p>Քանի որ տվյալ կազմակերպությունը ՀԿ է, ապա նշված ծախսերը համարվում են ծրագրային ծախսեր: Աշխատակազմի և ծրագրին մասնակից այլ անձանց ճանապարհաձախսը և օրապահիկը համարվում են թույլատրելի են, եթե դրանք չեն գերազանցում այն ծախսերը, որը սովորաբար կրում է ծրագիրն իրականացնող գործընկերը կամ Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված դրույքաչափը: Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված օրապահիկի դրույքաչափը ներառում է կեցության, սննդի, տեղական ուղևորությունների և այլ ծախսերը:</p> <p>Դա նշանակում է, որ նման ծախսերը պետք է նախատեսվեն ծրագրի բյուջեով, որը պատրաստվում և հաստատվում է նախապես: Ավելին, ծրագրի բյուջեն կազմելիս պետք է հաշվի առնել բոլոր ծախսումները, այդ թվում հարկային պարտավորությունների գծով, եթե այդպիսիք առաջանում են:</p> <p>Հարկ է նշել նաև, որ եթե միջոցառման մասնակցությունը ֆինանսավորվում է ծրագրի միջոցների հաշվին, գործատուն (ներառյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինը) չպետք է փոխհատուցեն այդ գործուղման հետ կապված ծախսերը: Միջոցառման մասնակցության հետ կապված ծախսերի փոխհատուցման մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի նախօրոք:</p>

Հարց	Եթե աշխատակիցը գործուղման է մեկնել արտասահման շաբաթ օրը, այդ օրվա համար օրապահիկ վճարվու՞մ է, թե ոչ
Պատասխան	<p>Համաձայն ՀՀ կառավարության 2335-Ն որոշման օրապահիկը պետք է վճարվի գործուղման ամբողջ ժամանակահատվածի համար, ներառյալ հանգստյան և տոն օրերը, աշխատողի հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և հիմնական աշխատանքի վայր ժամանելու օրը: Միաժամանակ ուսումնասիրեք նաև պայմանագիրը և խորհրդակցեք ԱԳՏՀ ծրագրի ղեկավարի հետ:</p>


## ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ	
<b>Ծրագրի գրանցում և ծանուցում</b>	<p><b>Ճահույթ չհետապնդող ոչ պետական մարմիններ</b></p> <p>ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերը Հայաստանում չունեն իրավական կարգավիճակ և նրանք չեն կարող գրանցվել պետական կառավարման որևէ մարմնում:</p> <p>Այնուամենայնիվ ծրագրերը պետք է գրավոր կերպով ծանուցեն ԵՄ պատվիրակությանը՝ վերջինումն հաշվառված լինելու նպատակով: Այդ ծանուցումը հնարավորություն կտա ծրագրերին սկսել հարկային արտոնությունների ստացման գործընթացը:</p> <p><b>Պետական մարմիններ և պետական հիմնարկներ</b></p> <p>Դրամաշնորհի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմինները և պետական հիմնարկները պետք է ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնեն տվյալ պայմանագրի պատճենը:</p> <p>Պետական մարմինները և պետական հիմնարկները եռամսյա և տարեկան պարբերականությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում հաշվետվություններ՝ ստացված դրամաշնորհների և դրանց հետագա օգտագործման մասին:</p> <p>Ինչպես և շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպությունները, պետական մարմինները և/կամ պետական հիմնարկները պետք է գրավոր ծանուցեն ՀՀ-ում ԵՄ պատվիրակությանը՝ հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հաշվառվելու համար:</p>
<b>Բանկային հաշվի բացում</b>	<p><b>Ճահույթ չհետապնդող ոչ պետական մարմիններ</b></p> <p>Ոչ պետական կազմակերպությունները կարող են Հայաստանի ցանկացած լիցենզավորված բանկում բացել մեկ կամ մի քանի բանկային հաշիվ ՀՀ դրամով կամ արտարժույթով: Հաշիվ բացելու համար անհրաժեշտ է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• այցելել բանկ,</li> <li>• ներկայացնել համապատասխան փաստաթղթերը,</li> <li>• լրացնել հաշվի բացման համար նախատեսված դիմումը և</li> <li>• կնքել բանկային հաշվի պայմանագիր:</li> </ul> <p>Այն դեպքում, երբ Հայտատուի կողմից ներկայացվում են բոլոր պահանջվող փաստաթղթերը, բանկային հաշիվը բացվում է անմիջապես:</p> <p><b>Պետական մարմիններ և պետական հիմնարկներ</b></p> <p>Պետական մարմինների և պետական հիմնարկների բոլոր արտաբյուջետային միջոցները մուծագրվում են տվյալ հիմնարկին սպասարկող տեղական գանձապետական ստորաբաժանման արտաբյուջետային միջոցների բանկային հաշվին: Եթե պետական մարմինները կարող են արտաբյուջետային միջոցների հաշիվներ բացել միայն ՀՀ կառավարության որոշմամբ, ապա պետական հիմնարկները կարող են բանկային հաշիվ բացել նաև գանձապետական համակարգից դուրս:</p> <p>Բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների (համայնքների դեպքում ավագանի և տարածքային կառավարման նախարարություն) և ֆինանսների նախարարության համաձայնությունը: Արտաբյուջետային հաշիվ բացելու հստակ ժամանակահատված նախատեսված չէ օրենսդրությամբ: Սակայն ըստ գնահատումների կպահանջվի մոտ երեք ամիս:</p>




# ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԼԵՐ ԱՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

## Տարբերակ 1. Դիմում և հարկային արտոնության տեղեկանքի հաստատում



Տարբերակ 2. Դիմում և հարկային արտոնության տեղեկանքի սերժու



## ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

<b>Աուդիտ</b>	Ղեկավար գործընկերոջ/գործընկերոջ հաշիվների, այդ թվում ծրագրային հաշիվների, ստուգում: Այն իրականացվում է կամ պայմանագրային մարմնի, Եվրոպական հանձնաժողովի, Աուդիտորների Եվրոպական դատարանի կամ արտաքին աուդիտորի կողմից: Դա ծախսերի ստուգում չէ, որը ղեկավար գործընկերը պետք է կցի գումարի պահանջի անդորրագրին:
<b>Պայմանագրային մարմին</b>	PRAG-ի սովորական տերմին, որն օգտագործվում է դրամաշնորհի տրամադրման և պայմանագրի կնքման նպատակով պատասխանատու մարմնի համար:
<b>Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակ</b>	ԵՀ կառույց է, որը պատասխանատու է խարդախության կասկածի դեպքում, հետաքննության իրականացման համար:
<b>Աուդիտորների Եվրոպական դատարան</b>	ԵՄ հաստատություն, որի խնդիրը ԵՄ ֆինանսական միջոցների աուդիտի իրականացումն է: Որպես ԵՄ արտաքին աուդիտոր, այն նպաստում է ԵՄ ֆինանսական կառավարման բարելավմանը և գործում է որպես ԵՄ քաղաքացիների ֆինանսական հետաքրքրությունների անկախ պահապան:
<b>Ծախսերի ստուգում</b>	Ծրագրի ծախսերի ստուգման մասին հաշվետվություն, որը պատրաստված է ծախսերի ստուգման տեխնիկական առաջադրանքի հատուկ պայմաններին (դրամաշնորհի պայմանագրի 6-րդ հավելված) բավարարող և հաստատված աուդիտորի կողմից:
<b>Սոնիտորինգ</b>	Համակարգ, որը ծրագրի գործողությունների կանոնավոր վերահսկումների միջոցով հնարավորություն է տալիս հետևել, թե ինչպես է ընթանում ծրագիրը՝ ռեսուրսների օգտագործման, իրականացման, արդյունքների ստացման և ռիսկերի կառավարման առումով:
<b>Նկարագրական հաշվետվություն</b>	Միջանկյալ և ավարտական հաշվետվությունների մաս, որը նկարագրում է ծրագրի իրականացումը:
<b>Շահույթ չհետապնդող ոչ պետական կազմակերպություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հիմնադրամ (ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (26.12.2002) 3-րդ հոդվածով տրված սահմանման),</li> <li>• Հասարակական կազմակերպություն (ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (4.12.2001) 3-րդ հոդվածով տրված սահմանման):</li> </ul>
<b>Ղեկավար գործընկեր</b>	Կազմակերպություն, որը ծրագրի գործընկերների անունից Պայմանագրային մարմնի հետ կնքում է դրամաշնորհի պայմանագիրը և ընդհանուր պատասխանատվություն է կրում ծրագրի իրականացման համար:

<b>Գործընկեր/ծրագրի գործընկեր</b>	Կազմակերպություններ, որոնք Ղեկավար գործընկերոջ հետ համատեղ մշակում և իրականացնում են ծրագիրը: Նրանք Ղեկավար գործընկերոջ հետ կնքում են Գործընկերության համաձայնագիր:
<b>Պետական մարմին</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ նախարարություններ և պետական կառավարման այլ մարմինների, որոնք իրականացնում են կառավարչական գործունեություն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում,</li> <li>• Տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ և մարզպետարաններ,</li> <li>• Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ավագանիներ, համայնքի ղեկավարներ՝ քաղաքային համայնքներում քաղաքապետեր, գյուղական համայնքներում գյուղապետեր:</li> </ul>
<b>Պետական հիմնարկ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն (2001 թվականի հեկտեմբերի 23-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 3.1)



EaPTC

EaPTC

**Արևելյան գործընկերության տարածքային  
համագործակցության աջակցության ծրագիր**

Բիզնես կենտրոն, գրասենյակ 411,  
Գամրեկեի փող. 19, Թբիլիսի, Վրաստան  
Հեռախոս՝ +995 790 369073

[www.eaptc.eu](http://www.eaptc.eu)

Ծրագիրն իրականացվում է Altair Asesores կազմակերպության կողմից՝ CECOFORMA, EIR Global, ICBSS, PM Group և TRT ընկերությունների հետ համատեղ

